

HAMALSARAN : Revue Arménienne, SCIENTIFIQUE ET LITTÉRAIRE

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
[UNIVERSITÉ]

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

Բնութիւնը միշտ քանդող՝
Գիտութիւնը վերաշինող .
Այս վերջինին դիմելու է,
Առաջինին տրեւոյ համար :

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

1900 — 1901

ԹԻԻ 9-10

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ, ՄԻՍԱԲ ՊԱՆՏԱՍԱՐԵԱՆ


ՓԱՐԻՋ

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ՏՊԱՐԱՆ

Directeur : MISSAK BAGHDASSARIAN

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն


| | |
|--|-----|
| Յովհաննէս Շաւարշ — կենսագրական — (Մ. Պաղտասարեան) . . . | 386 |
| Յաւակցականներ, 1. (Գէորգ Մկրտիչեան) | 399 |
| 2. (Գ. Կ.) | 401 |
| 3. (Զատիկ) | 403 |
| 4. (Մ. Ասատուր) | 404 |
| Այժմեականութիւն (Մ. Պաղտասարեան) | 405 |
| Ուղեղային Կիսագունդերու Դերը — Գիտական Ընթերցում — | 410 |
| Գ. Մամիկոնեան (Խմբ.) | 413 |
| Տրանսխումութիւն (Գ. Բ. Մամիկոնեան) | 415 |
| Գիտութիւններու Պատմութիւնը (Մօրիս Լէվի) | 427 |
| Սե՛ւ, Սե՛ւ . . . — բանաստեղծութիւն — (Հրուշան) | 434 |
| Ձեռաշրջում (Մ. Պաղտասարեան) | 435 |
| Ոգելից Ընկելիներ — Առողջապահական — (Նշան) | 439 |
| Գիրքեր եւ Թերթեր | 443 |
| — Նոր Բարգիւրք Ֆրանսահայ | 443 |
| — Որբունի | 445 |
| — Գերական Ընթերցարան | 446 |
| — Խարաղան | 458 |
| — Գութան | 452 |
| «Համալուարան» եւ իր Երկրորդ Շրջանը (Խմբ.) | 455 |

 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԵԱՆՈՒՑՈՒՄ

Առաջին Շրջանի 12 թիւերու մեր բաժանորդներէն մէկ քանի հոգի տակաւին իրենց բաժնեգիները ղրկած չեն . կը հաւատնք որ այս պարզ ծանուցումով գոհացած՝ իրենց պարտքը կը փութան կատարել :

Միեւնոյնը կը կրկնենք Ա. Շրջանի վերջին 6 թիւերու բաժանորդներուն :

Ձեռքի տակ չունենալով, դժբաղդաբար, մեր վաղամուիկ բարեկամին, Պ. Յովհ. Շաւարշի վերջին տարուան իւղանկարը, պարտաւորուեցանք «Համալուարան»ի մէջ գեւաեղել իր 4 տարի առաջ, Փարիզ հասած պահուն, հանել տուած յուսանկարը :



“ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ” Ի

ԵՐԿՐՈՐԴ ԵՐՋԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՒԻՆԸ

ԲԱՑՈՒԱԾ Է

Համալսարան « Երկրորդ Շրջանը » պիտի ունենայ (ինչպէս Ա. ը) 12 թիւ եւ պիտի սկսի 1931 յուլիս 1էն :

Համալսարան իր Ա. Շրջանի ուղղութիւնը պիտի շարունակէ, հետեւեալ կերպով .

1. Իւրաքանչիւր թիւը պիտի ունենայ իւրաքանչիւր մը (որ պիտի խօսի օրուան խնդիրներու վրայ) : 2. Գիտական նորոքիւններ : 3. Բժշկական, Առողջապահական եւ ինքնագարգացումի նպաստող (Գիտական Ընթացում) յօդուածներ : 4. Դասական ուսումնասիրութիւններ (Գրական եւ Գիտական) : 5. Եւրոպական կրթական հաստատութիւններու վրայ տեղեկութիւններ, եւ այլն :

« Համալսարան » շատերու բաղձանքին գոհացում տալու համար իր սխալքի թիւքնադատական մասը աւելի պիտի ընդարձակէ, ու օրուան հայ « Գիրքերու եւ Թերթերու » վրայ հակիրճ տեսութիւններ պիտի ընէ :

Համալսարան, ինչպէս շատեր թիւրիմացութեամբ կարծեցին, զուտ ուսանողական հանդէս մը չէ ու իր սիսդոսը նպատակին հետ մասամբ միայն առընչութիւն ունի, որուն վրայ մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք :

Համալսարան պիտի զբաղի ուսանողներով, բայց ոչ բոլորովին անոնց մասնաւոր զարգացումի սեփական նիւթերով. անոնց մեթոտ մը ցոյց տալու թելադրիչը պիտի ըլլայ, բայց ոչ կրթիչը, բան մը որ դիւրհասկնալի է :

Համալսարան, մեր լեզուագիտութեան օգտակար ըլլալու համար, երբեմն այդ կարգի յօդուածներ ալ պիտի հիւրընկալէ « պատմութեամբ », « վիպակ » ի եւ ուրիշ ձեւերու տակ, որոնք բարձր ու վարձի վերին շահեկանութիւնն ալ իրենց պիտի միացնեն :

Համալսարան բացի իր գիտական հոռուած յօդուածներէն, ուսումնասիրութիւններէն, քրօնիկներէն, նոր տեղեկատու բաժին մը պիտի բանայ, իր « Երկրորդ շրջան » էն՝ օտար գրական եւ գիտական նոր հրատարակութիւններու վրայ, օգտուելով Ֆրանս. կարեւոր հանդէսներէն եւ պարբերականներէն :

Հանայարանի ծրագրին այս փոքր բարեփոխումներու պէտքը զգացուած է մեզի ուղղուած բազմաթիւ թղթակցութիւններու խնդրանքին վրայ, ու մենք անոր գոհացում կուտանք քանի որ մեր նպատակն է օգտակար եւ միայն օգտակար ըլլալ մեր հայրենակիցներուն :

«Հանայարան»ի Երկրորդ Տարեշրջանի 12 թիւերու բաժանորդագրութիւնը փոխանակ 12 ֆր. կ' 10 ՖՐԱՆՔ է, աւելին երկրի համար :

Բաժնեկիները ղրկել Տնօրէն - Խմբագրապետին՝

MISSAK BAGHDASSARIAN
DIRECTEUR DE LA REVUE « HAMALSARAN »,
4, Rue Ortolan — PARIS

Միտաք Պաղտասարեան

Տնօրէն Խմբագրապետ «Համալսարան» Հանդէսի
Փարիզ, 4, rue Ortolan

Ներփակ կը ղրկեմ 10 ֆրանք (4 բուլլետ, 2 տոլար),
Հանայարանի «Բ. Շրջանին» 12 թիւերու բաժնեկիներ :
Հաճեցէք թերթերը ղրկել հետեւեալ հասցէին* :

Հասցէն գրել ՖՐԱՆՍԱՅԻՆ, մաքուր եւ ընթեռնակի :



ՅՈՎ. ՇԱԻՆԻՇ ՍԻՆՏՄԵՆՆԻ
(1877 — 1901)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱԻԱՐՇ

Յաւագին անհամբերութեամբ մը, որ երբէք անձկալի իրականութեամբ մը չի տրտիւր սիրտը, վեց - եօթը ամիսներէ ի վեր կը սպասուէր ողբացեալին յաւերժացումին, անոր անդամնալի հեռացումին :

Շաւարշը մեռա՛ւ . . .

Հեռագիրը գուժեց, արձագանդեց զայն Ափրիկէի մէկ անկիւնէն, Ալճէրիայէն, ուր հոգիները չէ որ կ'ապաստանին, կայտառ խլրտումով մը, այլ անոնց ուրուականները՝ ստուերի մը ամպոտութեամբ, անէութեան դատարկին մէջ ծփծփալու :

Մեռաւ Շաւարշ, առանց ապրած ըլլալու . մեռաւ ան կեանքի մը գոյութիւնը ենթադրել տալու հաճար լոկ, ու թողուց իր ետեւէն անտրոշութիւն մը որ իր կենդանագրին բնական յատկանշանականն էր :

Հեռացաւ Շաւարշ, միշտ միեւնոյն ճակատագրական անխուսափելիութեամբ որ կը խոյանայ եւ լեռանայ մեր առջև. . . : Այի մը անձանօթ եւ օտար հողի կոյտին տակ կը հանգչի ան, ուր վարդն ու փուշը պիտի բուսնին եղբայրաբար եւ անխնամօրէն եւ ուր հովն ու վայրենի սարահակը պիտի հիւսին միայն իր անտէր մնացորդներուն շուրջը եղերերգական համանուագ մը, շատ պարզ բայց անհունօրէն խորհրդաւոր եւ թրթռուն :

. . . Ու Շաւարշ, զգայուն բանաստեղծը, պիտի յուզուի իր անշուք փոսին մէջ վայրկեան մը, պիտի ունկընդդէ անյագ կերպով՝ իր հոգիին կապուող այդ ներդաշնակութիւնը եւ սփոփուած պիտի նիրհէ. . . յաւիտեան :

Հազիւ քսանըչորս տարեկան՝ անէկա կը հեռանար կեանքէն գոհունակ յափրացումով մը, որուն սակայն սիրով փարած էր :

Կեանքի հաճոյքը զինքը կը գինովցնէր անթոյն հեշտանքով մը, ու անոր աւթած դառնութիւնը իր մէջ կը հրահրէր անխուզ եւ պաղարիւն գիմագրաւում մը :

Իր հոգիին բարոյական մեծութիւնը, զինքը կը տանէր իտէալական հեռաւոր հորիզոններ, որոնց ամայութեան մէջ իմացականութիւնը կը հովանայ եւ զգացումը կը ծովանայ :

Կեանքի փիլիսոփայութիւնը, այսպէս ըմբռնուած, ընդցուլած էր Շաւարշի մէջ՝ գաղափարականն ու իրականը, որոնք կ'առաջնորդեն մարդ էակը որքան զգայնիկ այնքան դրական համակերպութեան մը, որով ան ամեն վայրկեան կը ստիպուի յարմարիլ՝ դայն տարուբերող բազմաթիւ եւ

նորանոր վիճակներու : Ու այսպէս իր բոլոր կեանքին մէջ անիկա յուզումի մեծնէ դառնալին եւ զգլխիչ վայրկեաններն ունեցաւ , որոնք կսկծագին կերպով ազդեցին իր ֆիզիքին վրայ , որուն գոյութիւնը բնութեան համերաշխ տարրերու հետանքն ըլլալու ճշմարիտ գրաւականը կուտար իրեն :

Ու այսպիսի սկզբունքներով սնած եւ ուռճացած հոգի մը՝ քաղցր բնաւորութիւն մը միայն կրնար անձնաւորել , որ իր ծայրայեղութեան մէջ , յօժար եւ գիտակից խափուող մը կ'արձանացնէ : Կը լսէր անիկա ամենուն , տրամադիր բարեացակամութեամբ մը , որուն գործնական վաւերացում կուտար պարզամիտ յուզումով մը :

Չէ ունեցած իր ամբողջ կեանքին մէջ զիւղի վայրկեան մը , որ այնքան անդամներ ցատում կը պոռթկայ . երկար ու խորէն եկող հեզնութիւն մ'էր որ կը նկարուէր իր ցուրտ գէժքին վրայ , ամենէ ապստամբեցուցիչ հանգամանքներու մէջ իսկ :

Իր այս բարոյական վիճակին մօտ սակայն կար եւս ուրիշ մը . այն ահեղ վիճակը որ կ'այլասերէ կանուխէն հասունացած երիտասարդ աւիւնը , կը ջլատէ զայն ու կը սպաննէ , երբ անհամապատասխան նիհարութեամբ մը կապուած է առաջինին հետ : Նիւթական վիճակն է անիկա , թունաւորող զրկանքով մը պրկուած . . .

Շաւարջ զարգանալու համար կը թողու իր հայրենիքը թողատ , գրեթէ չորս հինգ տարի առաջ . կուրայ Փարիզ հակառակ իր ծնողքին ընդդիմութեան , ու կ'ուսանի գաւրավերջիկ գիտութեան վրայ հիմնուած ընկերական-խմաստասիրութիւն եւ գրականութիւն : Իր ուսումը սակայն

յաճախ կ'ընդհատի ապրուստի վայրագ պահանջին առջև, ծնողական անկարելի հոգացողութենէ մը զրկուած . . . ու երեւակայել՝ թէ ուսանող մը պարտաւորուած ըլլայ մէկ քանի սանթիմ շահելու համար արհեստանոցէ արհեստանոց վազելու այն ալ զլացուի իրեն . . . : Այս էր Շաւարշի գըրութիւնը գրեթէ երեք տարի առաջ, երբ հիւծախտէն նոր բուժած, խարուսիկ ապաքինութեան մը շրջանը կը մտնէր :

Այս նիւթական անորոշ վիճակի մէջ էր՝ երբ Շաւարշի կ'առաջարկուի՝ իր ընկերներէն մէկին կողմէ, — որ Իշ. Լուսինեանի մօտ՝ անոր բառգիրքին աշխատութիւնները դիւրացնելու համար քարտուշարի եւ օգնականի պաշտօն կը վարէր — 100 Փրանք ամսականով իր տեղը բռնել : Շաւարշ հակառակ ստանձնուելիք գործին ծանրութեան, որ խիստ չնչին թոշակով մը կը վարձատրուէր, կը համակերպի առաջարկին ու իր բոլոր անձնուիրութեամբը մեծ պարկ կուտայ անոր : Երկու տարիի չափ աշխատեցաւ Իշ. Լուսինեանի մօտ, ու այնքան որքան իր նախորդները չէին ըրած՝ լիուրի վարձքով, 5 տարուան ընթացքի մը մէջ :

Յաճախ կ'ըսէր ինձ. « Ա՛խ, եթէ քիչ մը դիւրութիւն ունենայի ապրիլ կարենալու համար, այս դաժան գործը կը ձգէի, որ իմ ժամանակս կը սպաննէ եւ առողջութիւնս կը խանգարէ, ու այն ատեն ի՞նչեր չէի ընեք » : Հոգիին խորէն եկող բացազանչութիւն մ'էր ասիկա, զոր հետզհետէ կը պարզաբանէր Իշ. Լուսինեանի չկամեցութիւնը* :

* Միջանկեալ ըսենք հոս, — որուն վրայ թերեւս օր մը երկարօրէն վերադառնալու առիթ ունենանք, — թէ Իշ. Լուսինեան իր բարիքներովը (?) կը զեղու միայն անոնք որ գինքը կը շոշոքորթին :

դէպի իր մէկ անձնուէր պաշտօնեան :

Բացի այդ թոշակէն, որուն մէկ չորրորդը այդ գործին վրայ կը ծախսուէր, Շաւարշ կը ստանար իր ծնողքէն փոքրիկ գումար մը, բնակարանի վարձքը վճարելու համար միայն. այնպէս որ իրեն ապրուստի եւ ուրիշ օգտակար ձգտումներու համար կը մնար միայն գրեթէ 75 Փրանքի գումար մը՝ որ շատ նիհար է, Շաւարշի նման լայն ծրագիրներով գործունէութեան ընդարձակ հող փընտրել ուզողներու համար :

Այս ամսու յուլիսին, երբ ջերմաչափը 45° կը նշանակէր, Շաւարշ իր պիսիֆիքքը նստած օրական չորս անգամ 7-10 մղոն ճամբայ կը կտրէր, Իշ. Լուսինեանի աշխատութեան համար, ու օր մը ուժասպառ 5 վայրկեանի յապաղում մը կ'ունենայ : Խիստ յանգիմանութիւններ Լուսինեանի կողմէ . . . ցաւագին զայրոյթով մը կը թողու գործը եւ կը հեռանայ :

Հաղիւ մէկ երկու շաբաթ անցած էր՝ այդ խղումէն Շաւարշ վերջնականապէս իր ջղուտ կազմուածքին տկարանալը զգաց ու անկողին մտաւ : Հալեցաւ անիկա՝ մաշեցաւ, ու ամեն խնամք իր վիճակին մէջ որ եւ է բարեկաւութիւն առաջացելու անկարող եղաւ : Ու չարարաստիկ օր մը, Սեպտեմբերի վերջը, ան կը թողուր Փարիզը — « առանց զայն տեսնած ըլլալու » կսկծագին հառաչանքով մը —, երթալու Ալճէրիա, տաք կլիմա փնտրելու համար :

Մինչև Փարիզը թողուլը Շաւարշ կը պահէր իր մէջ կեանքին դէմ հեգնող ժպիտը, ու թէեւ տկար՝ հիւանդագին տենդոտութիւն մը եւ առոյգ շարժունութիւն մը ցոյց կուտար : — Կը գրէր օր մը սակայն ինձ սա մահասարսուռ տողերը, որ իր դամբանականին կանխող վանդիւնները կ'արձագանդէին. « Ամա՛ն, Միսաք, տաքէ պաղէ, չա-

փաղանց յոգնութենէ զգուշացիր, որովհետեւ հիմա կը զգամ անգին յարգը առողջութեան զոր կարելի է կորսնցնել վայրկեանի մը մէջ. մինչ ատրիններ պէտք են զայն վերստանալու համար, այն ալ միշտ չի յաջողիր. . . »: Ա՛լ իր վերջին բառը ըսած էր, որբացեալ բարեկամիս առողջութիւնը. ա՛լ եւս Շաւարշ այդ վայրկեանէն պէտք էր զողորած համարիլ ապրելէ, այս եղաւ իմ ճնշող ու խոցող մը տածումը:

1901, յունվար 4ին գիշերը, մահը իր արհաւիրքը կը հնչեցնէր՝ Ալճէրիայի Պօն քաղաքին քաղաքային հիւանդանոցի չորս պատերուն մէջ՝ եւ Շաւարշ ժամանակին ու միջոցին անստուգութեան մէջ կ'անհետանար, ապրելու համար միայն հոն, ուր յիշատակը կը ախրապետէ եւ երեւակայութիւնը կը հսկէ. . .

* * *

Յովհաննէս Շաւարշի կեանքի պատմութիւնը խիստ կարճ է: Ծնած է 1877ի վերջերը Թոքատ: Կը պատկանէր Սիւղմէճեան գերդաստանին, ու իր ծնողքը բաւական բարեկեցիկ էին: Իր նախնական ուսումը Թոքատի մէջ ընկելէ յետոյ կը մտնէ Էրզրումի Սանասարեան Վարժարանը, որուն « ապակեանած եւ սահմանափակ միջնորդը » խիստ նեղ կը գտնէ իր բաղձանքներուն: Անխնամ ուսումի մը համար չի փաքելով իր երիտասարդութեան թանկագին ժամերը վատնել, կը թողու Սանասարեան Վարժարանը, հոն ախրող վատթար սէփիմին զէմ կատաղի պայքար մը մղելէ յետոյ:

Գրեթէ 4 ամարի առաջ Փարիզ կը հասնի, ուր՝ Սօրպօնին մէջ, կը հետեւի գրականութեան եւ փիլիսոփայու-

թեան : Բարձրագոյն Ուսումներու Վարժարանին մէջ, մասնաւոր խանդոտութեամբ մը կ'ունկնդրէր Փրօֆէսէօր Ժիւլ Սուսի « Կեդրոնական ջղային դրութեան » վրայ ըրած դասախօսութիւններուն, որոնք քննադատական խորին եւ դիտական ուսումնասիրութիւն են այն ամէն յարարութիւններուն զորս մարդկային ուղեղը, որ իր մէջ կը տեղաւորէ իմացականութիւնը եւ զգայնութիւնը, կըստեղծէ հոգեկան եւ ֆիզիքական աշխարհներու մէջ :

Կենսագրականի այս կցկատուր եւ չոր տեղեկութիւնները տալու անհանդուրժելի պարտականութիւնն իսկատարելէ վերջ՝ անցնինք Շաւարշի գրական եւ հասարակական գործունէութեան, ուր շատ բան ունինք ըսելիք եւ որոնք հըրահանգիչ շահեկանութիւն մը ունին իրենց մէջ :

Շաւարշ չարտադրեց մեծ բան մը, այդ իրաւ է. սակայն տափակութիւններու անձունի գէղեր գրաւական չեն անունի մը շուրջը մասնաւոր ուշադրութիւն դարձնելու համար : Երբեմն մէկ նախադասութիւն բաւական է անուն մը նուիրագործելու համար :

Շաւարշ՝ իր գրականութիւնը գիտական հողի վրայ դնելու իննամբը, իր զարգացումի եղանակին մէջ՝ անհրաժեշտ պահանջ մը դարձուած էր : Ու այս համոզումը զոյացուցած էր այն օրէն իսկ երբ քաղաքակիրթ ազգերու կարեւոր օրհոռ մը լաւապէս հասկնալու կարողութեանը հասած էր : Չունէր բնաւ յաւակնոտութիւնը՝ գրական փառքի մը տիրանալու, սակայն կը սիրէր ըլլալ բառին ներհուն նշանակութեամբ գրագէտ մը : Այս բաղձանքին մէջ անոր հոգին արժանիքի խոյանքներ երազել կուտար

իր վրայ, որոնք արուեստակեալ ու մունջ փօնով գրողէն խիստ հեռու կը թաւալին :

Շաւարշի անհետացումով, կրնանք կանխազուշակել, թէ կը կորսնցնենք ապագայ մեծ ոյժ մը, որ պիտի հիմնէր գրական նոր գպրոց մը մեր մէջ, ուր ցնորական եւ խռպոտ երեւակայութիւնը չպիտի յաճախէր եւ ուրկէ բառախաղութեան աչք ու ականջ չլացնող ու խլացնող, միտք ու հոգի բթացնող ու ապականող անճոռնի գրչի-վարպետներ դուրս չպիտի վիժէին : Յաճախ, իրօք, սիրած ենք հաւատալ, սոհմային անդիմադրելի մարմաջով մը, թէ ունեցած ենք գրողներ, գրադէտներ, ու լուսնոտ յաւակնատութեամբ մը զանոնք մինչեւ Հիւկօներու, Իպսէններու, Շէյքսպիրներու եւ նմանօրինակ հեղինակ-վարպետներու հետ բաղդատելու ապուշութեանը հասած ենք : Ազգային հիւանդութիւն մ'է ասիկա, ուրկէ զերծ՝ չպիտի մնանք, եւ ուրկէ պիտի վարակուին մահացու կերպով յաջորդող սերունդներն ալ, եթէ շարունակենք մենք այն ինքնախափ գրութիւնը, զոր այօր կը ներբողենք պոռոզանի ձայնին սառեցուցիչ ոյժգնութեամբը, մինչեւ այն վայրկեանը, ուր մէկ անգամ ընդմիջտ հասկնանք սա ճշմարտութիւնը թէ առանց գրական ծանօթութիւններու գրականութիւն մը կամ հոգին կը քնացնէ տարտամութեան մէջ, կամ մարմինը կ'ապականէ տգիտութեան մէջ :

Այսպէս տողորուած՝ ձեռնպահ մնաց Շաւարշ որ եւ է գրականութեամբ գինովեալ, ու ցնորքի փառքեր վժվժալ : Կը պատրաստուէր այն վայրկեանին, ուր անճնապատտան դժպիլութեամբ հրապարակ պիտի գար խարոյկելու համար խելամուղօր գրչակը եւ կախաղան հանելու մեր գաճաճ եւ անարիւն գրականութիւնը : Ֆրանսական արդի հեղինակ մեծ զէմքերու գործերը անյաբօրէն կը կարդար, ու անոնց

նմանելու համար պինդ կրթութեան մը զմայլելի գիտակցութեան մէջ կը տքնէր: Դարավերջիկ գիտութիւնը ասպարէզ բացաւ նոր գրականութեան մը, ուր գեղեցկին յափշտակիչ ներբողը՝ ճապուկ վերացականութեան մը անշօշափելի սահմաններուն մէջ չի շրջանակուիր: Այս յեղաշրջումը տապալեց աւանդական եւ բնականաբար ժառանգական պատիր զգացումը (խիտ արմատացած մեր մէջ), որ կախարդիչ եւ թելադրական յորդանք մը կուտար մտքի թռիչներուն եւ արտայայտութիւններուն: Իրականութիւնը իր ճշմարիտ ու բանաստեղծական անողորմութեամբը տիրապետութեան հասաւ ու պարտաւորիչ դարձաւ: Քաղաքակիրթ աշխարհի գրականութիւնը այդ գիտական տուեալներէն է որ կը կուսնէ: Շաւարչ շատ լաւ քմբռնած էր զայդ:

Շաւարչի գրական գործունէութիւնը երկու շրջաններու կրնանք բաժնել. առաջին շրջանին մէջ ան արտադրեց, ոտանաւորներու փունջ մը, ուր երգեց պատանեկական խանդոտութեամբ մը ծնողական սէրը, ու ամփոփեց զայն գրքոյկի մը մէջ:

Մասնաւոր ընդունակութիւն մը ցոյց տուած էր, իր փոքրիկ հասակէն, բանաստեղծութեան ու այդ մասին իր սէրը հետզհետէ շեշտուած եւ աճած էր:

Մասնասրեան Վարժարանի մէջ, զպրոցի գրասեղանին վրայ, հրապարակագրական ձգտումներով ոգևորուած՝ իր խմբագրապետութեամբ եւ քանի մը ընկերներով, տեսուչներէն եւ ուսուցիչներէն ծածուկ, ձեռագիր հրատարակած է հանդէս մը, որուն քանի մը թիւերը տակաւին կը պահուին նոյն վարժարանի գրադարանին մէջ:

Երկրորդ շրջանը կը սկսի իր Փարիզ ժամանելէն յետոյ: Այս պահուն, զարգացումի ու կրթութեան նոր մեթոտի

մը տակ, Շաւարշ խտտապահանջ գտնուած է իր կրակոտ պատանեկութեան անչափաւոր յղացումներուն դէմ: Հիմնական գրականութիւն մը իւրացնելու բաղձանքով տոգորուած, ցանցաւ էջեր արտադրեց, որոնք կամ կը հեղհեղէին յուսահատ կեանքի մը «Չանքն ու տանջանքը», կամ յոռետես վարդապետութեան մը հակիրճ տեսութիւնները:

Թղթակցած է շատ մը հայ թերթերու, ինչպէս «Արեւելեան Մամուլ»ին, «Բիւրակն»ին եւ մասնաւորապէս «Մշակ»ին, ուր գրած է լոկ իմաստասիրական եւ ընկերական հարցերու վրայ հակիրճ ոճով մը եւ սքանչելի աշխարհարատով մը:

Ինչպէս միշտ, պարբերական թերթերու մէջ ալ իր հրատարակութեան տուած ոտանաւորներու տակ ստորագրած է «Հրուշան», որ իր բուն անունին առաջին երկու տառերուն — Յ. Շ. — հնչումը կ'անդրադարձնէր:

Իբր հեղինակութիւն թողուցած է միայն ոտանաւորներու գրքոյկ մը (հրատարակուած Պօլիս, Պաղատալեան գրատուն) եւ ձեռագիրներ: Այս վերջիններուն մէջ աչքի ինկողներն են «Հայ Տաղսցափութեան» վրայ իր մէկ ուսումնասիրութիւնը, որ մինչեւ այսօր անտիպ կը մնայ Պաղատալեան գրատան մէջ, եւ հայերէն Հոմանիչներու հսկայ Բաւարանը, որ իր տեսակին մէջ ամենէ ճոխն ու հարուստն պիտի ըլլար, եթէ մահը վրայ չհասնէր ու զայն կիսկասար չթողուր:

Հայերէն լեզուին հիմնովին տիրացած էր. իր աշխարհագրութիւն քերականական որոշ ձեւ մը տալու հետամտած էր միշտ. իր ոճը ու լեզուն խիստ ճոխ էին եւ նուրբ գաղափարներու արձայնատութեան համար չափազանց ձկուն:

Անշուշտ չենք սպասեր Շաւարշի հասարակական գործունէութենէն այն բողձացեալ օգտակարութիւնը, որ քանի մը երիտասարդ տարիներու, ու այն ալ ծանրաբեռնուած, հոլովումէն չի ծագիր: Ապագայ ոյժի մը բողբոջումը ու թոռմիլը կը վերհանեն իր այս ճամբուն մէջ ցոյց տուած ձգտումները:

« Համալսարան » գիտական եւ գրական ամսաթերթի հրատարակութիւնը՝ ըլլալով առաջին հիմնաքարը իր ընկերական գործունէութեան, իր առջեւ ընդարձակ ասպարէզ մը կը բանար: Ինչ որ անուրանալի է, ու միանգամայն հիանալի, այս հրատարակութեան մէջ Շաւարշի ցոյց տուած գերմարդկային անձնութիւնն էր, որ՝ ազրուստի մը ըղձանքէն բոլորովին հեռի, կամովին զրկանքի զոհաբերութիւն մը կը պատկերէր:

Իե՞ս նոր « Համալսարան » ի առաջին թիւերը երեւցած էին՝ Շաւարշ հիւանդագին վիճակի մը մէջ ինկաւ: Իր գուրգուրանքով սիրած հանդէսին հազիւ քանի մը գրական կտորներ նուիրեց, որոնք կնքեց « Յի-Շէ-Սա » ստորագրութեամբ եւ չորս-հինգ հատ՝ արուեստի ու ճաշակի մէջ ծայրագոյն նրբութեան հասած ոտանաւոր եւ արձակ բանաստեղծութիւններ, որոնց մէջ երգեց՝ կանխալուր բնագոյով մը՝ մահը, . . . իր լնանը:

Երգեց մահը ան՝ մռայլ վանգիւնով՝ մը, որ իր դամբանականի ճշմարիտ նուագը պիտի կազմէր:

Իր « Մենութիւնը »* ոտանաւորին մէջ.

* Համալսարան թիւ 2, էջ 86:

« Ու ես լացի՛, անդադար, արիւն արցո՛ւնք թափեցի՛
Ամբողջ օրեր, մի՛ս մինակ, սենեակիս մէջ ամբափակ,
Եւ դառնութեան սեւ մըրուրն ակործակով լափեցի,
Յագուրդ տալու ծիւրախտին՝ որ կ'արթննար կուրծքիս
տակ :

Այնուհետեւ, ա՛լ օրերն ըստուերի պէս կը սահին,
Գերեզմանիս կիսաբաց հողէն քիչ մ'ալ պեղելով...
.....

Սիրտս արիւնի լիճ մ'եղաւ, մարմինս պատան սեւ սուգի,
Հոգիս բուրվա՛ն մը խանձող հառաչներով ողբական...
Ու կեանքս ամբողջ՝ հեղհեղում մը յորդառատ արտասուքի :

Մենութիւնն է իմ ընկերս ու վիշտերուս լուռ վրկան...
Ու գիշերներն՝ ահաբեկ՝ երբ անկողին կը մըտնեմ,
Կը փափաքիմ ես սրտանց՝ որ քունիս մէջ մա՛հ գըտնեմ : »

Իր « Կեանքը »՝ ռաանաւորին մէջ ոգիին հետ կը խօսի եւ զգածուելով « վարդ երազներու եւ տենջանքներու պատրանքէն, մինչ իր հոգին սեւե՛րու մէջ կը յածէր », սա իր մօտալուտ մահը կոչնակող ահաբեկիչ տողերը ոգիին բերնին մէջ կը գնէր.

« Այ՛ո, գիտեմ այս ամենն, ու դեռ զուցէ աւելին...
Ու կը տեսնեմ որ գէմքիդ վարդերն արդէն կը հալին.
Բայց ի՞նչ օգուտ, կեանքը տանջա՛նք մ'է ահեղ
Ջանք ու տանջա՛նք անընդատ, որու բեռին տակ ճընշող
Ձո՛ւր կ'երագէ մարդկութիւնն Ապագայ մը լուսաշող,
Որ կը նիրհէ գերեզմանի փոսը նեղ... »

* * *

Շուարշի այս վաղահաս մահը պիտի արիւնէ կսկծագին կերպով շինքը սիրող բոլոր ընկերներու եւ իրեն մօտէն ծանօթ բոլոր անհատներու սիրտը : Կ'արձանագրենք

* Համալսարան Թիւ 4, էջ 198 :

այդ ախուր իրականութեան պատմութիւնը «Համալսարան»-ի այս էջերուն մէջ, որ իր անծանօթ գերեզմանին անջնջելի տապանագիրը պիտի քանդակէ. . .

Հանգի՛ստ քեզ սիրելի բարեկամ եւ անսգիւտ ընկեր: Հանգի՛ստ քու հոգիիդ, որ իր անրիժ պայծառութեամբը փայլեցաւ յուսալից գործունէութեանդ առաջին քայլերուն իսկ: Հանգի՛ստ հասարակական անձնուէր Գործիչին, որ քու մէջ երեւան եկաւ տոկուն ըմբռնումներու, ճշմարիտ հայեացքներու, անձնավստահ եւ անվեհեր արիութեամբը:

Հանգի՛ստ չքնաղ բանաստեղծին, որով համակուած, լարեցիր քու քնարդ ու երգեցիր սե՛ւ կեանքին ու անշուք կեանքիդ ամենէ թուրիչ վայրկեանները, արուեստին ճշմարիտ ու բնական հոյակապութեամբը:

Թո՛ղ քու յիշատակը վառ մնայ ընդ միշտ, անոնց սըրտին մէջ, որոնց հետ գործեցիր եւ անոնց որոնց համար ճգնեցար:

Ձրկանքի իմաստասէրին, մտաւորական Մշակին, զոր անձնաւորեցիր, յաւիտեան հանգի՛ստ. . .

ՄԻՍԱԲ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Հեռագիրը գուժեց Շաւարշի մահը, թերթերը արձա-
գանդ տուին եւ Նոր Տարիի առթով ստացած նամակներուս
մէկին մէջ սա առկերը կարգացի. «Կսկիծը աւելի մեծ է երբ
երիտասարդ մ'է մեռնողը եւ այն ալ օտար փերու վրայ :
Ամենքս ալ ցաւեցանք անոր մահուան վրայ՝ Գանաւանդ
որ մտքի եւ գրական ոյժ մ'էր ան որ կ'անհետանար :»

Այո, մտքի եւ գրական անվիճելի ոյժ մ'էր ան՝ մեր
այդ աղքատիկ հորիզոնին վրայ. արշալոյսի այն ինչ բա-
ցուող վարդ մը՝ որ հրակէզ հովի մը շունչէն խորշակահար
կ'իջնար. առաւօտեան արուսեակ մը, հորիզոնին ծայրը
պսպլացող, որ մոայլ ամպերու ետեւ կը մարէր :

Չորս տարիներ առաջ, 1897ի գարնան առաւօտ մը,
տենայ գինքը Լիւքսէնպուրկի պարտէզը. բարեկամս, Հ.
Աճառեան, զայն ինձ ներկայացուց. դեռ նոր հասած էր Պօ-
լիսէն՝ ճիշտ ինձ պէս մասնաճիւղ մը սորվելու տենդէն
բռնուած :

Յիզիքական առողջ կազմութիւն մը, միջակ հասակ
մը, վառվառն սեւորակ աչքեր, թաւ սեւ մազեր, պարզ
ու համարձակ նկարագիր մը, զոր կենացս մէջ երբէք ճանչ-
ցած ըլլամ, ահա՛ ինչ որ ճանչցայ իր մէջ առաջին տե-
սութեանս :

Այդ օրէն իրարու հետ սերաիւ կապուեցանք :

Մինչ ես Հանքաբանական բարձրագոյն վարժարանը
կը մասնէի, Շաւարշ աւելի լայն եւ ընդհանուր դաղափար-
ներով խմորուած, կ'ընտրէր Սօրպոնը եւ Գօլէթ տը Փը-
րանսը՝ հանրութեան կանուխէն օգտակար ըլլալու բաղ-
ձանքով :

Թողով իր կենսադրականը լիովին ընելու պարտքը
բարեկամիս, Պ. Պաղասարեանի հոգատարութեան, իմ
այս հրապարակային համառօտ ցաւակցականիս մէջ կ'ուզեմ
մասնաւորապէս վեր հանել Շաւարշի հասարակական գոր-

ծունէութեան երկու գլխաւոր կէտերը, այսինքն «Համալսարան» հանդէսին եւ անոր տպարանին հիմնարկութիւնները: Ու ի՞նչու չյիշել 1900 Յուլիսի մէկը, երբ երկու եռանդուն գաւառացի երիտասարդներ՝ զուրկ ամէն մասնաւոր աջակցութենէ, ինչպէս կը վայելէին եւ կը վայելին ուրիշ արտասահմանեան հայ թերթեր, իրենց անձնական զոհողութիւններով, օգտակար թերթի մը հիմնումէն յետոյ, այդ օրը կը բանան, անոր իսկ յարատեւութեանը համար, հայ տպարան մը եւ այն ալ Բարեգի մէջ: Իրօք մեր լրագրական տարեգիրներու մէջ անջնջելի պիտի մնայ այդ թուականը:

Իր սիրած ասպարէզը այլ եւս բաց էր. կը մնար իրեն խիզախօրէն առաջանալ. բայց հիւժախտը արդէն բոյն դրած էր անոր կուրծքին մէջ ու անընդհատ կը կրծէր զայն: Մաւրիտանիայի հիւրամերձ ակերուն վրայ գնաց փնտռել զարմանն այն հիւանդութեան՝ որուն մահը միայն կը դիմաւորէ: Եւ արգարեւ Յունվար 4ի գիշերը մեր երիտասարդ բանաստեղծը կը մարէր հոն, ուր երբեմն քրիստոնէութեան աստղերէն մին փայլեցաւ:

Հեռի հայրենի յարկէ, հեռի մայրենի գորովէ, հեռի բարեկամական կարեկից ակնարկներէ, ի՞նչ խոհեր եւ յոյզեր ունեցար, ողբացեալ բարեկամ, վերջին տառապակիր օրերուդ մէջ: Ու երբ Յունվար 4ի գիշերը, հիւանդանոցի ախուր որմերուն մէջ մահուան ցուրտ այցելութիւնը ընդունեցիր, անշուշտ վերջին անգամ մ'ալ մէկիկ մէկիկ քու սիրելիներդ յիշեցիր, եւ թերեւս զիս ալ, որովհետեւ կրկին անգամ խոովայոյզ երազներով ընդոստ արթնցայ եւ գիշերուան խորհրդաւոր լուութեան մէջ, անկողնիս մօտ ծնրադիր, բարեկամս՝ քեզ յիշեցիր:

Որքա՛ն շուտ կը հեռանաս մեզմէ. անշուշտ կ'ուզես երկնքի կապոյտ զգեստին մէջ երթալ գտնել վաղամեռ քոյրիկդ, որուն մահը այնքան խոր ներգործեց քու զգայուն սրտիդ, մինչեւ պատանեկական տխուր քնարդ լարեցիր եւ անոր բեկբեկ ձայնով վշտերուդ խորութիւնը երգեցիր:

Երթաս բարեա՛ւ ազնիւ ընկե՛ր, երթա՛ս բարեաւ. երբ գարնան զեփիւռը անշուք հողակոյտիդ վրայէն սուր-սուրալով անցնի, ու երբ արշալոյսին ծաղիկներու անուշ բուրժունքով եւ թռչուններու դայլայլներով եթերը լեց-ուի, գիտցի՛ր որ այն մեր ազօթքն է, այն մեր մրմունջ, այն մեր մաղթանք եւ խունկ՝ քու յաւերժական յիշատակիդ նուիրուած :

Գ. ՄԿՐՏԻՉՅԱՆ

Աշակերտ Հանքարան. Բարձ. Վարժ.

Վարժարանէն կը ճանչնայի զինքը. ուշիմ ու ժրջան, զեռ մանուկ հասակին մէջ, դպրոցական դասեղաններու վրայէն իսկ բարձր էր իր տենջանքը ու իր երազները կը թափառէին շատ անգամ այն իտէալին հետ, որուն բեւերն տակ պիտի ընկճուէր վերջապէս : Քաղցր ու հեղահամ բոյր, իւր բոլոր ընկերներուն սէրը դրաւած էր ու ուսուցիչները յատուկ զուրգուբանք մ'ունէին այս յառաջագէմ պատանիին վրայ, որը ապագային մեծ յոյսերով լի կը թուէր իրենց : Առանձնութիւնը կը սիրէր, բայց շատ մը մենակեացներու ետսիրութիւնը չունէր նա, սիրտը կը բարախէր արդէն ընկերոջ գծբազդութեամբ ու ուրիշին օգտակար լինելու սկզբունքը հեռզհեռէ կը սկսէր արմատ ձգել այնտեղ :

« Փոքրիկ բանաստեղծ էր իւր անունը ». յաճախ բարգիններու թառուտին տակ ժամերով կը պատէր միայնակ իւր մտածումներու մէջ ընկողմանած, կամ Արտածոր շատ անգամ կը անսնէի զայն տուտին եզերքը նստած երկարօրէն գիտել արեւին մուտքը, երկրներանդ ամպերուն խաղերը, երկնքին կարմրութիւնը, երեկոյեան զեփիւռը ու այս ամենը անշուշտ մեծ ազդեցութիւն մ'ունէին իր մատաղ սրտին վրայ, կարծես թէ այնտեղէն կը ներշնջուէր, ու այս մասին շատ անգամ իմ հեղնտա խօսքերուս հակիրճ

պատասխան մը միայն ունէր. « Ի՞նչ կ'ուզես, կը պաշտեմ վերջալոյսը » :

Օր մ'ալ, դեռ առաջին անգամ լինելով՝ կարծեմ « Մամուլը » կը հրատարակէր իր ոտանաւորներէն մէկը « Լճակ » վերնագրով՝ գրուած Դուրեանի ազգեցութեան տակ. սասնըչորս տարեկան էր տակաւին : Գացի զինքը շնորհաւորելու, գոհ էր, արգար հպարտութիւն մը կը ցոլար դէմքին վրայ, աչքերը վառվառն, խնդումերես. վերջապէս ընդհանուր արտայայտութիւնն ունէր այն մարդուն, որ յաջողութեանը վստահ, լիայոյս է իր սպազային վրայ. « Շաւա՛րչ, ըսի, քիչ մ'աւելի ուրախ եղիք, տարիքիդ զուարթութիւն կը վայելէ » . տխրեցաւ նա իսկոյն ու ոչինչ չպատասխանեց, չեմ գիտեր թէ արդեօք լոկ կեղծ նըմանութիւն մ'էր, որով հասկցնել ուզէր թէ ինքն ալ կը տանջուէր մեծ բանաստեղծին ցաւով, ինչ որ յատուկ է մանաւանդ սկսնակներուն, որոնց քով ինքնաճանաչութիւնը զարգացած չէ. թէ ներքին մեծ յուզման մը արտայայտութիւնն էր, ինչ որ ճշտիւ չի կրցի հասկնալ. բայց այս յանկարծական փոփոխութիւնը այնպիսի ազգեցութիւն ըրած էր իմ վրաս, որ կարծես այս բոպէին հետ կապուած լինէր իմ մէջ Շաւարչի յիշատակը :

Մէյ մ'ալ կը յիշեմ հրաժեշտի ողջոյնը. տխուր էր նա ու ցաւալի էին իւր ակնարկները, զինքը տառապեցնող հիւանդութեան գիտակ, մահուան դայուկը արդէն պատած էր իր դէմքը, զոր յոյսի վերջին ճաճանչ մը հազիւ կ'աշխատէր զուարթացնել : Յիշլով յանկարծ այն բոպէն՝ երբ հպարտ աչքերով այնքան գոհ էր ու խնդումերես, ապագային վրայ վստահ, շանթահար մնացի տեղս, անհուն տխրութիւն մը համակեց զիս այն ժամանակ, ունայնութեան զրացում մը մտաւ իմ մէջս, ու մեքենայարար աչքիս առջեւէն անցան այն բոլոր յոգնալատապակ կեանքերը, որոնք դեռ արդիւնքի մը չի հասած կ'ընկճուին իսպառ, իտէպլին հետապնդողներն, որոնք կէս ճաճան կանդ կ'առնեն ակամայ. մեծ, անյայտ տաղանչներ, որոնք կարճատեւ երեւումէ մը յետոյ անխնայ կը վերցուին՝ այն աստ-

զերու նման, որոնք այսօր կը փայլին քիչ յետոյ մարելու համար:

Որովհետեւ ինքն ալ անոնցմէ մէկն էր:

Գ. Կ.

... Պաղտասարեան,

Դառն կսկիծով մը զիս համակեց անբաղդ եւ ազնիւ բարեկամիս մահուան գոյժը, որչափ որ յանկարծական մը չէր ինձ համար տտիկա՝ այն վերջին տեսութենէս յետոյ, ուր, հալած ու հիւժած, ստուերի մը տպաւորութիւնը թողած էր վրաս: Իր մեղամաղձոտ նայուածքը, բեկբեկեալ ձայնը եւ դժուար շնչառութիւնը, այդ կանխահաս մահք նախագուշակել կուտային:

Շաւա՛րչ, ին՞չ ունիս. « Բանաստեղծ մը մահէն վախնալու չէ »: — Կեղնական ժպիտով մը, որով պահ մը իր անկենդան աչքերը վառեցան, այսպէս պառասխանեց. « Մահէն կը վախնան անոնք որ կեանքը կը սիրեն եկօխք ըմբռնումներով, եւ որոնք անհատը ընդհանուրէն կը նախընտրեն... Կեանքս ամբողջ անդրաշխարհային հեղհեղում մը եղած է արդէն. եթէ ունիմ միակ ցաւ մը, զոր մահուան արհաւիրքին մէջ զիս կը կսկծէ, այն է ընդ փոյթ հեռացումը այն ասպարէզէն՝ որուն վրայ այնքան երազած էի եւ ուր դեռ նոր թեւակոխած էի: Կեանքիս մէջ ունեցած զրկանքներս, բարոյական թէ՛ նիւթական, ինձ ո՛չ մէկ սարսափ ազդած են: »

Շաւարչի այս տխուր վախճանը օտար հողի մը վրայ, հետու իր սիրած ծնողքէն եւ բարեկամներէն, թէեւ կը թողու անձանօթ հողակոյս մը, սակայն իր անունը պիտի խորապէս տպաւորուի մեր մաքին մէջ, զոր պիտի յիշենք իւրաքանչիւր անգամ երբ ներբողել ուզենք ընկերութեան օգրակար, անձնուէր եւ յուսալից ապագայ խոստացող կանխահաս կորուստ մը:

Շաւարշ իր գործունէութեան մէջ, անաչառ եւ խնւտաբարոյ, հազուագիւտ հրապարակագրի մը ամէն ձիրքերով օժտուած կ'երեւէր. ներեց իր գրական թշնամի գրչակներուն, որոնք չէին կրցած իր սուր քննադատութիւններուն դասը կուլ առլ:

— Այս ծանր կորուստը, սակայն, կը յուսամ եւ կը հաւատամ որ նորածին «Համալսարան»ին վրայ, քու եռանդագին անձնութեամբ, որ եւ է հետեւանք չպիտի կրնայ ունենալ. «Համալսարան»ին որ այնքան քիչ ժամանակի մէջ, իր կորովալի ուղղութեան շնորհիւ, անհրաժեշտ պահանջ մը դարձաւ հայ գիտասէր զաստակագրին եւ ինքնազարգացումի փափաքողներուն:

Ընդունէ

Փարիզ

ԶԱՏԻԿ

. . . . Պաղտասարեան

. Երիտասարդի, ճշմարիտ գործողի խանդով ու եռանդով սկսած, հոգևով փարած էիք օգտակար եւ յաբաւտեւ դարձնելու «Համալսարան»ը:

Ծնողքը՝ Զաւակ մը, Դուք՝ ճշմարիտ Բնկեր մը, Ազգը՝ Գործող մը, Դրող մը, Բանաստեղծ մը կիրոյս:

Երանի՛ թէ զինքը տեսած չըլլայի վերջին օրերուն. նա մահը ունէր աչքերուն խորը, թոքերուն մէջ. այն աւտենէն ցաւեցայ իր վրայ:

. . . . Յիշատակ մը կը թողու զինքը ճանչցողներու համար, որք պիտի յարգեն եւ պատուել ամեն զինքն անձամբ չճանչողներուն:

Մարտիլիա

Մ. ԱՍՍՏՈՒՐ



ԱՅԺՄԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻԱՔ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Հին դիտութիւնը կ'ըսէր. «Արարածներու ստեղծագործութիւնը նպատակաւոր է». դարաւերջիկ դիտութիւնը, իր հսկայ կատարելագործումին մէջ, սակայն, ձգտեցաւ այդ կարծեցեալ ճշմարտութեան ոչ միայն անհիմութիւնը ցոյց տալ, այլ եւ նոր դաւանանք մը նուիրագործել, որ իր անողոք անհերքելիութեան մէջ կոչուած է ընկերական կեանքի դադափարական ու իրական ոյժը դառնալու, անոր բաղդին զեկաւարն եւ վերջապէս անոր էականութեան, գոյութեան զսպանակն լինելու:

Գոյութիւնը կամ կենդանականութիւնը իրերու համերաչխութեան անխուսափելի հետեւանքն է, թէեւ իր կընճոտ ծագումը, խնայականութեան առջեւ խուսարամած մթնոլորտ մը պարզէ: Բայց ինչ որ ճշմարիտ է, իրականութեան մէջ, այդ ինքնաբեր ծագումէն ու սերումէն յետոյ, ենթակայ տարբեր, անորոշութեան խանձարուրէն ոչ միայն բոլորովին մերկացած են, այլ ստացած են, իւրաքանչիւրը իր անհատականութեան մէջ, որոշ գեր, իւրացած են որոշ պայմաններ՝ մասնակի ամբողջութիւններով. եւ այսպէս ինքնաբերաբար, բայց անհրաժեշտօրէն, զծուած են սահմաններ, որոնք կը պարփակեն գոյութեան իրաւունքի ճշմարիտ իշխանութիւնը:

Եթէ կենդանական աշխարհին մէջ, առ հասարակ, կենցաղի երեւոյթները միեւնոյն տեսարաններով չեն ներկայանար, ու պարտաւորուած ենք զանոնք բնորոշել, յատկազօծել, այդ բանը պէտք է արտաքին տեսութեան մը վերադրել. որովհետեւ հիմին մէջ, միեւնոյն տիրապետող օրէնքի ոյժգնութիւնը կը պահպանուի եւ կը բացատրուի:

Անասնական կեանքը միշտ զօրաւորին կը վերապահէ դոյութեան իրաւունքը. կեանքը բնութեան մէկ առանձնաշնորհումն կարծես լինի հոն, որ ոչնչացում կ'որոտայ, տկարին եւ պակասաւորին:

Գոյութիւնը բնութեան մէկ քանահատոյքն է, եթէ կարելի է այսպէս ըսել, անոր շեղումի մէկ երեւոյթը, որուն սկիզբն ու վախճանը հաւասարապէս անորոշ են: Այս տեսակ կեանքի մը մէջ, եթէ երբէք ուզենք նոյատակ մը ուրուագծել, ատոր բնաւ կարող չենք յարաբերական արժէք մը տալ, այլ ինքն իր մէջ ընդհանուր եւ բացարձակ: Նպատակը, այդ ատեն, ինքնին կեանքն է. կ'ապրի միայն անիկա, որ աչրելու յատուկ ամեն ընդունակութիւններով օժտուած է:

Կենդանականութեան այս ստորին աստիճաններուն վրայ, ուր կենցաղը իր ամբողջ մերկութիւններով վերօրէն եւ անպատկառօրէն կ'արձանանայ, ուր երեւոյթներու խառնիճազանձ ընդգրկումներ անոր ճշմարտադոյն պատկերը չեն վարագործեր, ուր ընդհակառակը բնական, յստակ եւ հակիրճ պարզութիւն մը կը տիրապետէ, այլապէս կարելի չէր տեսնել եւ բացատրել գոյութեան ճշմարիտ կողմն ու նպատակը:

Սակայն իմացական աշխարհին մէջ իրերու արուեստակեալ բեղբեղում մը, վերիվայր կը շրջէ ամեն պայծառ տեսութիւն: Կեանքի նպատակը կը փոխուի, կամ գոնէ այնպէս կը թուի ըլլալ. անոր պայմանները ուրիշ պահանջումներ կը ներկայացնեն. այնտեղ աչրելու իրաւունքները կ'ընդլայնին, անհատական ու յարաբերական իրաւունքները կը թուին համահաւասար աճունութեամբ մը բողբոջիլ. բայց վեր առնենք այս մոգիչ ու դիւթիչ վա-

բազոյրը, խարուսիկ պարուրանքը, պատրիչ փալիլումը, պիտի գտնենք միշտ՝ երկաթէ տառերով գրուած, նոյն արձանագրութիւնը, զոր ընտելութիւնը ինքը գծած է. « Իրաւունք ունի միայն ապրելու անիկա, որ օժտուած է կեանքի հարկաւոր ընդունակութիւններով » :

Հոս ձեւը, փայլը փոխած է, բայց հիմը միեւնոյն լինելէ չէ դադրած : Ընկերական կամ մարդկային կեանքը հիմնովին անասնականութիւն մը չէ. հոն կը գործեն գիտակցութիւնը, իմացականութիւնը, մտաւորական կարողութիւնները, որոնք իրենց կատարելագործումի եւ ստացած զօրեղ ծաւալումի հոսանքին հետ կը ստեղծեն տեսակ մը հեղինակութիւն եւ կը վերապահեն իրենց իրաւունքներ, որոնք այս կամ այն ուժէն խլուած գողօններ են եւ որոնք կազմած են եւ կը կազմեն գոյութեան փորձաքարը : Այսպէս ըմբռնուած, ինչպէս կ'երևի պարզօրէն, միշտ միեւնոյն նպատակն է, կռուածադիկն է որ իր վրայ կը պտուտի կեանքի առանցքը եւ որուն կը խուժեն կամ անիկ կը յետնկին, ենթակայ տարրերը, անոր հպատակ կենդանականութիւնները :

Ու այդ վայրկեանէն, կը նշմարուի նոր եւ միեւնոյն առնն այնքան հին երեւոյթ մը, որուն գիտակցութիւնը պիտի վարէ իմացական աշխարհին մէջ անհատին եւ զանգուածին գոյութեան իրաւունքի խնդիրը, ու այդ երեւոյթն է զոր պիտի անուանենք Այժմեականութիւն :

Եթէ նպատակը ապրելու մարմաջը չըլլար, եթէ կենդանականութիւնները, իրենց համախմբումներով կոչուած լինէին որոշ գերի իրենց ստեղծագործութեան պահուն իսկ, առանց ապառնի ընդունակութիւններու իւրացումին, անտարկոյս չպիտի ուռջանային այն բաղմաթիւ անատուններն ու էակները, որոնք ծննդական միեւնոյն ծառին ճիւղաւորումներն են, որոնք միեւնոյն սկզբնաւորութիւնն

ուենին: Ծովերու մէջ պատգարան փնտռող ձուկը պիտի ապրէր անառններու վայրենի վագրին հետ, օտին մէջ ճախրող թռչունը՝ պիտի գրկախառնուէր զայն հալածող որսորդին հետ, գոմերու միամիտ ոչխարը պիտի եղբայրակցէր իր ցեղային թշնամի գայլին հետ, ու ամբողջ բնութիւնը անշարժ համերաչխութիւն մը պիտի դառնար:

Այն վայրկեանէն երբ կեանքի պայքարը, գոյութեան պահպանումին մրցումը սկսաւ բնութեան սարբերու մէջ, տկար սողունը թեւեր ստացաւ, ինքնապաշտպանութեան բնազդով համակուած, իր նմաններուն՝ բայց բնութեամբ զօրաւորներուն, զոհը չըլլալու համար: Ու այս կերպախոխութեան շրջանէն անցան հետզհետէ նորանոր կենդանական ձեւեր եւ հեռացան իրենց սեղծագործութեան նպասակէն (°) կազմելու համար ուրոյն տեսակներ, ամբողջութիւններ:

Այս բնական օրէնքի վայրենութիւնը՝ եթէ պահ մը վտանգաւոր կը թուէր ըլլալ կեանքի բազմանալուն, միւս կողմանէ այլազան եւ իրական բեղմնաւորութեան մը մեծապէս կը նպաստէր. ու կարելի է հաստատել թէ այդ օրինակ օրէնքի մը գոյութիւնը ոչ թէ բոլորովին զերծ է անպատեհութիւններ ունենալէ, այլեւ ճշմարիտ սատար մը աստիճանաւոր առաջդիմութեան եւ զարգացումի:

Եթէ կենդանական բնազդը ինքնապաշտպանութեան կը մղէ միամիտ անասունը, ու անոր մէջ նորանոր ընդունակութիւններ եւ պայքարելու ասակ նորանոր յատկանիշեր կ'աւելցնէ, յատկանիշեր՝ որ ժամանակին կամ միջավայրին պահանջներուն կրաւորական հիպոզեցութիւններն են, ատիկա լըրումն ու կառարումն է այն երեւոյթին զոր քիչ մը վերը անուանեցինք «Այժմէ սկանութիւն»:

Անասնտիկան կեանքի այս յատկանշանական ձեւախոխութիւնը, իմացական աշխարհին մէջ աւելի ոյժգին եւ աւելի կնճռոտ խազերու մէջ երեւան կուգայ, որ կը յեղաշրջէ ընկերական կարգերը, մարդկութեան ճակատագիրը, ժողովուրդներու բազմը եւ վերջապէս ընդհանուրի բարձր

ու բարոյականը : Ազգերու պատմութիւնը այդ ճշմարտութեան անողոք վկան ու ենթական է :

Ուրեմն ապրելու կոչուած են այն ժողովուրդները , այն ազգութիւնները , որոնք կը բարեշրջուին ժամանակին պահանջներու համաձայն . այն ընկերական կարգերը՝ որ այժմէականութիւն մ'ունին . կրթական , կրօնական հաստատութիւնները , որոնք զիրենք շրջապատող պայմաններու համապատասխան ուղղութեան մը կը ձգտին :

ՈՒՂԵՂԱՑԻՆ ԿԻՍԱԳՈՒՆԳԵՐՈՒ ԳԵՐՐ

Գեղեցիկ և ուժով հաւու մը՝ եթէ ուղեղային երկու կիսագունդերը ամբողջովին հանուին, անիկա կընայգար-ձեալ տասը ամիս ողջ-առողջ ապրիլ, նոյն իսկ աւելի, կ'ըսէ գիտուն մը: Այս բանը ապացուցանելու համար հետաքրքիր փորձեր ըրած է, որոնց ընթերցումը թէ շահեկան է և թէ հրահանգիչ:

Հազիւ ուղեղին երկու կիսագունդերը հաներ էի, երբ հաւը իր երկու աչքերու լոյսը կորսնցուց. ո՛չ կը լսէր և ոչ ալ կամեցողութիւն ունէր, բայց իր օտքերուն վրայ շիբ-շիտակ կը կենար, կը քալէր երբ միտէիք կամ հրէիք. կը թռչէր երբ օդին մէջ կը նետէիք, ջուրը կը կլլէր երբ կատուցին մէջ դրուէր:

Տեղէն չէր շարժեր առանց զայն զրգռելու, և երբ ոտքերուն վրայ կայնեցնէիք կամ, հաւերուն սովորութեան պէս, փորի վրայ պառկեցնէիք այնպէս կը մնար: Շարունակ տեսակ մը թմրածութեան մէջ ընկղմած էր. ո՛չ ազմուկը և ոչ լոյսը կ'ազդէին վրան. մինակ անմիջական զրգռումը, ինչպէս կամիթը, զարնելը, ծակումը կընային շարժումի մէջ դնել:

Գործողութենէն վեց ժամ ետքը, հաւը խորունկ և լման քունի մէջ ինկաւ, այսինքն վիզը ետև դարձուց և գլուխը պահեց իր թեւերուն վերի մասին փետուրներուն տակ, այնպէս՝ ինչպէս կ'ընեն առհասարակ քնացող հաւերը:

Գառորդ ժամ այդ վիճակին մէջ ձգելէ յետոյ, մէկէն կը գրգռեմ հաւը որ հօք կ'արթննայ: Արթուն գարթուն (կ'արթննայ չարթննար) նորէն խորունկ քունի մէջ կ'իյնայ:

Գործողութենէն առանձնէկ ժամ յետոյ, կեր կուտամ հաւուն, զայն բերնին մէջ թխելով՝ որ լաւ կը կլլէ:

Երկրորդ օրը հաւը իր քնաթաթախ վիճակէն դուրս կ'ելլէ ու այդ ժամանակ քունէն արթնցող որ եւ է հաւուն շարժուածքը ունի:

Կը թօթուէ գլուխը, փետուրները կը շարժակէ եւ երբեմն ալ կատուցովը կը սրցնէ եւ կը մաքրէ զանոնք. ոտքը կը փոխէ, որովհետեւ յաճախ կը քնանայ մէկ հատին վըրայ, ինչպէս բոլոր թռչունները առհասարակ:

Ամէն պարագայի մէջ, կ'ըսես թէ մրափող մարդ մըն է, որ առանց բոլորովին արթննալու, եւ դեռ կէս քուն, տեղ կը փոխէ, առջի քունին յոգնութենէն անհանդիստ. ուրիշ աւելի հանդիստ քունի մը մէջ կ'իյնայ, կը փոռւի, կ'երկնցնէ իր անդամները, կը յօրանջէ, քիչ մը կը թօթվոտի եւ նորէն քուն կը մտնէ կամ այսպէս թմրած կը մնայ:

Երրորդ օրը հաւը սովորականին պէս հանգարտ չէ. կ'երթայ կուգայ, առանց շարժառիթի, նպատակի. եւ եթէ ճամբուն վրայ արգելքի մը հանդիպի, ոչ զդուշանալ պիտէ եւ ոչ անդիէն երթալ: Իր մսիկները (caroncules) կրակի պէս կարմիր են, էաչին այրող. սուր տենդ մը կը լսփիէ զայն. կը բաւականանամ կոկորդէն վար ջուր լեցնելով:

Ոչ մի ջղաձգութիւն, ոչ մի անկանոնութիւն իր շարժումներուն մէջ, եւ երկու օր ետքը ո՛չ տաղնապ կայ եւ ո՛չ ջերմ: հաւը կը հանգարտի եւ կը մրափէ սովորականին պէս:

Գործողութեան երկրորդ ամիսն է: Հաւը ողջ առողջ է. որովհետեւ խնամքով կը կերակրէի՝ շատ գիրցաւ: Միշտ շատ կը քնանայ. երբ քունը չառնէր, մրափուն վիճակ մը ունի:

Երկար սառնէ ի վեր օշին ենթարկուած զանկին ոսկո-

րուա մասերը կը քաշուին եւ թերթ կը թափին: Սպիտակ
յուժը արագ արագ առաջ կ'երթայ:

Գործողութենէն հինգ ամիս ետքը, չի տեսնուած կեր-
պով հաւը գիրցաւ եւ մատղաշցաւ. գլխուն վէրքը բոլոր-
ովին գոցուեցաւ. նուրբ, ճերմակ եւ ողորձ մորթ մը դայն
ամբողջովին կը ծածկէ, ու մորթին տակ, սակրային նոր
խաւ մը կը սկսի կազմուիլ՝ որ թէեւ բարակուի, սակայն
հաստատուն է:

Շատ անգամ, մինչեւ երեք օր, այս հաւուն ծով քրու-
նիկ տուի. յետոյ, կերը իր քթերուն տակ գրի. դարձ-
եալ, կտուցը հատիկներուն մէջ խօթեցի, կուտը կտուցին
ծայրը դրի, կտուցը ջուր դրի եւ ցորենի կոյսերու վը-
րայ դրի: Ո՛չ հոտ առաւ, ոչ կուտ մը կլկեց, ոչ խմեց.
անշարժ մնաց ցորենի դէզերուն վրայ, եւ ազահովապէս
անօթի պիտի սատկէր եթէ նորէն չսկսէի անձամբ կերցնել:

Գտան անգամ, փոխանակ հատիկի, անոր բերանը խի-
ճեր դրի, զոր կլկեց անտարբերութեամբ:

Վերջապէս, երբ այս հաւուն քայլերը խոչընդոտի հան-
գիպին, անոնց կը զարնուի, ու այդ բազիւտմը կը կեցնէ
եւ կը ցնցէ դայն (ծbranler). սակայն մարմնի մը զարնելը
անոր հպիլ ըսել չէ: Հաւը երբէք չի խարխափիր, ոչ ալ
կը վարանի իր ընթացքի մէջ. կը զարնուի բայց չի շօշա-
փեր:

Այսպէս ուրեմն, առանց ուղեղի հաւը իրապէս կը կոր-
սընցնէ իր բոլոր զգայարանքները: Սակայն այս զգայա-
րանքներէն ոչ մէկը ուղղակի չէ մնասուած: Աչքը կատարե-
լապէս պայծառ է, յստակ եւ իր ծխածանը չարժուն: Ոչ
լսողութեան, ոչ ուտելու եւ ոչ ալ շօշափումի գործարան-
ները ուղղակի անխառն մնացած են:

Ձարմանալի բա՛ն, զգայարանքներու բոլոր գործա-
րանները կան ու կը մնան, բայց ճանաչողութիւնը ամ-
բողջովին կորսուած է: Ուրեմն ճանաչողութիւնը այդ գոր-
ծարաններուն մէջ չէ:

Հաւը, իր ուղեղային կիսագունդերը կորսնցնելով,
կորսնցուց նաեւ իր բոլոր բնազդները. ինչքան ալ ծով ու

անօթի ձգես, ինքնիրեն չուտեր, ինչքան ալ պաղ ու տաքի ենթարկես տեղ մը չապաստանիր. բնաւ ինքզինք չի պաշտպաներ ուրիշ հաւերու դէմ. ոչ կրնայ փախչիլ ոչ թեթքել. արտադրելու ոչ մէկ յօժարութիւն ունի. արուին դգուանքները կամ անտարբեր կը մնան կամ չեն նշմարուիր:

Հաւը կը կորսնցնէ խելքը. ո՛չ կը կամենայ, ոչ կը յիշէ, ոչ կը դատէ:

Ուղեղային կիսագունդերը, ուրեմն, ճանաչողութեան, քնազգներու եւ խելքի միակ ընդունարաններն են:

Գ Ր Ի Կ Ո Ր Մ Ձ Մ Ի Կ Ո Ն Ն Ա Ն



«Համալսարան»ի մէջ, այս անգամ կը հրատարակենք այն «Տրակտատսրիւնը» զոր գրած է գաւառացի ուսուցիչ մը Գրիգոր Մամիկոնեան, Եկեղեաց (Երզնկա) գաւառի գիւղացիներու բարբառով:

Գրիգոր Մամիկոնեան, ծնունդով գիւղացի, ստացած էր համալսարանական ուսում, Երզնկայի կրթական գործին վարիչ կանչուելէ առաջ: Հժուռ էր մանաւանդ հայ

հին լեզուին եւ աշխարհաբարին, ու իրմէ զատ ո՛չ ոք պիտի կարենար այնքան հարազատ տեղական ոճով մը գիւղական բարքերը պատկերացնել, որուն մէկ չափազանց հեռախփիտ նմոյշը կը ներկայացնենք մեր ընթերցողներուն :

Այս կարգի գրութիւններու հրատարակումը օգտակար է, 1, Հայ բառարանին, որովհետեւ զայն պիտի ճոխացընէ գաւառային անձանօթ բառերու յաւելումով մը, որոնք յաճախ իրենց կոկիկ կազմութեամբ նուրբ գաղափարներ կը յայտնեն եւ 2. հայ լեզուաբանութեան, որովհետեւ այս վերջինը գաւառաբարբառներուն ընդարձակ ուսումնասիրութեան մը նիւթ պիտի գտնէ հոն :

Գ. Մամիկոնեան, մեր գաւառացի հազուադիւտ ուսուցիչներէն — որոնք կորովի զարգացումով մը կ'ուզեն բեղմնաւորել երիտասարդ միտքերը՝ անձնաւորելով ժողովրդի բարոյական եւ ընկերական կենցաղին ճշմարիտ ուղղութիւն մը տալու անձնուէր գործիչը — քահանայ կը ձեռնադրուի իր գործունէութեան աւելի արդիւնարար թոռիչ մը տալու տենչով, գրեթէ տասնեակ մը տարի առաջ. վաղահաս մահ մը սակայն վերջ կը դնէ այդ օգտաշատ կեանքին, որուն կորուստը դատնութեամբ ողբաց Երզնկայի երիտասարդութիւնը :

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Պ. Գրիգոր Նարնջեանի, գասառու Երզնկայի ազգային վարժարաններու մէջ, որ խնամօրէն պահած է իր սիրելի եւ ողբացեալ ուսուցիչին գրութիւնները եւ խոստացած է հետզհետէ զանոնք մեզի հրատարակութեան զրկել, հաւատալով որ կրնան օգտակար ըլլալ հայ բանասիրութեան եւ հետաքրքիր մեր ընթերցողներուն :

ԽՄԲ.

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

(ԱՆՁԻՆՔ)

Աղան, Մարտպա Կաթօն, Չարչի Անտօն եւ Իմիչի Աւետ:

— — — — —

Մարտպա Կաթօն. — Իմիչի Աւետ, ըս արալըզ կրնէ հաւելնիս փէք ետահան է. ախպա՛ր, վէր ղին կը դառնաս՝ հէջ լուս երեւալիք ծակ մը չի կայ. քէր պէրէքէթ չի մնաց. շխտակ մարդու, սատըզ պարեկըմի հէրիսը կը քաչենք. աշխարքը դառմադառուչ չէշիտ է եղեր. երեսիք չէշիտ մը, ղըյպէթիք չէշիտ մը կ'ըսեն. մէկու մը կիւվէնմիշ չես կըրնար ըլլար օ՛, սըռըզ այտնես. վէլ հասըլ, տակը փէկ ջըխմազ կ'երեւայ ինծի. օղորմած ախրուկըս խէյր անէ պիլէքիմ, հունա քանի մը կտոր փառչա փուռչա հոզ մնաց պապէնական, վախնամ քի ան ա ուտինք աէ « տափ տընիլը » մնանք օրթան:

Իմիչի Աւետ. — Տիւնիլուր Կալօ, տըհա մեր ըս զաշածը քիչ է. նէ քըրիստոնայութին կայ, նէ հաւատ, նէ օրէնք, նէ աէ նամուս. չունքի նէ մեծերնիս մեծ է, նէտէ պզտիկնիս պզտիկ. քաղկըցին չէշիտ մը, կեղացին չէշիտ մը. նէ՛ շխտակ իշխան մնաց՝ նէ ալ շխտակ ժողովուրդ, ախպար իրար կողոպտելու էտիւէ են. ղուրպան ըլլամ Աստծու մենծ օղորմութեանը օր՝ կրնէ պատառ մը հաց օլտուն կու-

տայ . հըլէ մէ մը միտքըդ բեր հին ժամանակու մարդիկը , իմ հարըս , քու հարըդ . ան ի՞նչ մէօհիւպէթ , ան ինչ անուշուրթին էր մէջերնին : Իշտէ Ասուած ալ սրտերնուն կէօրէ կուտար , ըն վախթին հիքմին քանի ծիաւոր կ'ելլար մեր կեղէն , կիտե՞ս , առտուանց տըհա «ետքը չի նիշանտածի» օր կ'ելլային տէ , սըրա սըրա կը հեղնային ծիաննին պոչերնին հանկուշտած , չուխա ֆէրմանաները հագած՝ ծոցերնին , ճէպէրնին իլիք , էշխով մը քաղաք կ'երթային օր , տեսնողն ա՛ մաշալլահ կ'ըսէր . հիմակ ալ նէյէ քի կասու մը օլտուն կրնա՞նք պահել :

Կարթն . — Ըտ օրերը անցեր ին , իմիչէ , հիմակվանը նէյինք , հէչ նէ «էլ առի , սուշման քօրի» , մինք մէկ կէզինտիրմիշ անեղուն զօլայը նէյինք : Քանի օ պանին տակը կը հիսապիմ , խորունկ մը հէճէլէմիշ կ'անիմ , քիչ կը մնայ օ ֆէսըս կլխէս թըռնայ . սա ին՞չ ժամանակու մնացանք՝ հէյ օղորձութեանդ քէօլէ ըլլամ երկնաւոր ստեղծող : Էմմէն պանին համը հոտը փախեր է , կիտես քի օրթըլաղը կրակ ինկեր կը պըռընկի , նէ՛ ինսաֆ կայ նէ՛ խղճմտանք . հինգ զուտուշի համար ջուվան օր էլլաս ա սուտղ չի կայ :

Իւիչի Անես . — Ինսօ՞ չի կայ , Տիւնկիւր , քաղաք շա՛տ , իլիք . հըլէ քէնէր քէօչէ մութ տեղանը եղածները ընթին թող մնայ . չարսուն ասուճ կըլտի սնտուկ մը կայ . ո՞ւսկէ ուզես չես տար . հըլէ թէմիզ , ույլուն քէֆիլ մ'ու մէկ «կած»ին ալ օրը քըսան «կուտ» ֆայիզով սէնէտ մը տուր , ծեռքըդ պիլէ կը պագնին , աէ՛յ կիտի աէ՛յ . «պէկտէ պուլունմիյան էլաէ պուլունուր» : կուտան , ախպար կուտան , սօրխին հոքէն տըկէն էլլալը տիժար է հօխաա . լաքին , սա՛ի միտքըս պան մը ինկաւ . սու ինչո՞ւ փարայի ղէյիթ պիտի քաշես . հէր քէչ քեղի երբիմիշ կ'ըլլան . հէրիֆ , աղա մը ունիս օ , զօճա քաղաքը ավուճին մէջն է սուեր . էմմէն պան իր ծէռքովը կը դառնայ . զէնկին տօնղուզ , հիմա հոգին կ'ելլայ օ հանի քեզի ծէռք մը պոնէնը . քէնէ լաւ մարապա ուրկէ՞ կրնայ կանաւ . ըսքան վախըթ է էօլիւկով , ճէօճիւկով ընոնց արտերը կը վաստրկիք , հարիւր տարվան էմէքտար , պէտք է օ քեզի նէյի :

Կայօ. — Իմիչէ Աւետ, տուն ա հէյ կիտի, կիտես քի տընա լեռնէն նոր էս իջեր, ետխուտ ինսընի մէջ հէջ չես մըտեր, նստեր փարա մը չարած խօսքեր կը զուրուցես, հէրիֆին ըսածն է՝ «կէօրէն հաճի, կէօրմիյէն մէօհթաճի» . զէնկին աղան ի՞նչ ֆայտա ունի ինծի, ուրազը տաշուքը իր առջեւը կը քաշէ. կուտայ ինքէր չիմ աներ. կուտայ հէ՞մ չուզածի կուտայ, լաքին կ'ելլայ ընանկ նեղ սըրայի մը կ'ուզէ օ, երկու օտքըդ մէկ եէմէնիի մէջ կը սըխմէ . ան հիսապլամիչ կ'անէ, կը նէյի քի կէղացուն թիրիթ վախթը իփ է նը, հըննը սըրային տալիդ կը չոքի. կիտէ օ չունիս, կուգայ կալին էրկու ամիս մընալուկան պողազիդ կը փակչի լէզի ծութի պէս, օր նեղը մնաս՝ արտ ունիս, տուն ունիս՝ թանկ, աժան թօփ եօլին տաս իրեն խալըսիս :

Աւետ. — Ատամ, եանի սէնտէ, ըսանկ անօրինութին ա կ'անէ օ, էպպէյի անուշ, խոնար, սանկ օղորմած մարդ մը կ'ըլմանի, լաքին էս իշնամ ախպար, «ինսանըն դարա»ը իջէրտէն տիր», է տուն ա մի՛ տար, խօշ պարտաւէրը մարդուն հոգին չի կընար առնել. կալէն ետքը կուտամ ըսէ վէսէլամ, մըտիկ չարաւ, հոգին որ ճէհէննէմը կ'ուզէ թող հոն հըամմէ . եանի ի՞նչ, օր կանկտի նը ի՞նչ պիտի առնէ, ճուխտ մը ճուղապ է՝ էն ետքը՝ կ'ըսիմ կ'ելլամ տուս. «էֆէնտիմ պօսճըմըն քէօլէսի էմ, ըմա շիմտիք եօխ աըր, սապըո էթսըն, խարման ջըխարտէ վէրիւրիմ» իշտէ պու, սըվօր տակը պան մը կա՞յ. ի՞նչ մարդը կ'ուտին. էկէր միւր էմրանքը զապթ անելու նիյէթընէ մեզի պարտք էուտան նը, չըսե՞ս օ եանքէսիճի ին . հաղորդ ըմմաս, ըդ չէչիտ օլապճի մարդոց հախէն ալ իշտէ ըսանկ կալու է, «աինսիդին հախիւընտան իմանսուզ կէլուր», տայաթմիչ արէ վէսսէլամ :

Կայօ. — Իմիչէ Աւետ, ու՛րի, հերու միւր փիճը չի կարգեցանք, կրողին հարանիքն ըլլար, էրկու ճեռով աներնիս աւրեցանք տրանք վար, նէյիսէ կիսէ ընոր սէպապն ալ միւր աղա օլաճախն էր, չէնը իմ աղաս կարգն ի՞նչ պիտի անէր. կնաց էկաս, թէպէտլէչ էղաւ, Տիւնկիւրկալօ,

Օվակը ե՞փ պիտի կարգես, իլլէ էս կինկընար պինի ըլլամ՝ հէմ քեզ զօլայ կարմընճէ մ'ա կ'անցընիմ, աէր իքէն խօսքը չերկընցընինք, Սուրբ Սէրգիսին պահուանելուն է, վարը ախոռին սէքին ա նստեր ենք. կ'ուտենք կը խմենք, ըստ սըրային նօրսոյենց կարօն ա հոն է, ու՞ր է հեռու լսողաց, հեռու սուրպ էրէսէդ պօզ էչ մը առեր էի իրմէն, առա փարային էաեւէ է էկեր. մեր ազան քէֆին մէջ հանեց ըստ իշուն փարան աուաւ. անտան սանիյէ, շուրա պէնիմ, պուրա սէնին, հասըլի ուզուն սէօզին զըսասսի, մեզ զանտուրմիչ արաւ, քէչքէ պէրաննիս չորնար տէ հա չըսէանք, լաւ կ'ըլլայ ըսանք, ըն սէհէթը ըս ազանիս էլ էթէկ էղաւ, պոլորն ինկաւ. Օվակը նշանեցանք, մէկալ շաբթուն ալ ազանիս լաթ մաթ էօթէ պէրի, քէսիմ, զօքընչի շալ, հարսնախպօր կօտի, վէլ հասըլ էղ մը պան, մէկ մ'ալ հըրամանին հետը ուրբաթ իրիկուն կէզը տամլամիչ արաւ, կարգեցանք ազան. ամիս մը ետքը հէսապ կօխարի, հիսապ աչչախի, առ քեզի հազար ութ հարուր զուռուչ, ախչարք մը պարսք, լըփ հայտէ ճըտերնին, — սէնէտ մը տուր տէ, ծեռքդ եփօ ըլլայ նը, ըն վախթը վճարէ ըսաւ, — նէ իսէ լաւ ըսանք. հիմա Զատիկն ըստին հազար հեղ ըսաւ, էն ետքը անցել շաբթու իրեք հեղ ա էտեւէս ճէլէպ թէզքիւրէսի չի զրկէ մի. էլանք կացանք, ետվար, եախար, իրիճա միննէթ, խօսք տուանք կէօլին սակ կանուած սօմընոց կտօրը մէջի ցորենով մորենով իրեն տանք տէ եախանիս սըկըրթինք, սէօզտէ ըսօր պիտի կայ:

Աւետ. — Կեցի, կեցի Տիւնկիւր Կալօ, տուն օ էքին արտդ կուտամ ըսիր նը, ինքը ի՞նչ ըսաւ՝ զապուլ արաւ: Կալօ. — Ծօ հէրիֆ, խենթ ես ինչ ես, սահաթ մը ես քեզի կալու Աւետարա՞ն կը կարդամ. զաթը իրեն տերաը մէրախն ի՞նչ էր, հա ըսածիս պէս աշուընիկը լաւ փիտէնէ պալուըչի աչքի պէս պատկեցան, հըմըն ըն սէհէթը ճէպէն պըտիքըլի մըտիքըլի թուզթ մը հանեց, ըհա ըսաւ, արզուհալն ալ կրել տուէր էի ըմա, կրինէ սանահաբա ես, քեզ մեզքընալուս կը պատըսիմ. հէրիֆ, մէկ արաէն ի՞չ կ'իլլայ ըստ, « ազ ախճա դարա կիւն իչիւն ախար »:

Ասուած կինէ կուտայ. հիմա մէկ արար սանքի ինծի ընանկ ես աուեր, Ասուած նորէն կուտայ. կընա, ըսաւ, փարայի հախուտ փըրթիյի պէտքութիւն ունիս նը չարչի Անասունէն ա'ւ, էս ըսեր իմ թող իմ վրաս կրէ', պէլլի օ քանի մը կատր հող 'նաց' ընոնց ալ աչք ունի, իշտէ քեզի կին-կըհար, աիյա քեզի սանահար:

Աւեճ. — Տիւնկիւր. հաղորդ, զու շատ պէյնի պօշ մարդ էս, ըհա ըգ մէկ չարչի Անասուն է ինչ զէհիր զէմպէլէկէ. մեր կեղացուն պիտէթթի տուեն աւըրողը ան է. իմ սըտ-խըս տասը տարի էսէջ ըս մարթէն կըռեցաւ, մէկ հին-տիին փարան իրեք հեղ առաւ ինէ տէ կինէ չօրը զանմիչ չեղաւ, էն ետքը կալին կ'եթայ կալը. էս հոն չիմ, հե-ռու սուրպ էրէսեգ մեր քիւլթէքէնը հոն կ'ըլլայ. կընիկ մարթ, զանմիչ կ'ըլլայ, կը վերցնէ կօտ մը ցօրեն կուտայ: Թէրկեցի, ընկէց ըստին մէկալէն առուտուր կ'անիմ, Պարոն Ուսէփէն, հեղղէթ, անա քաղքըցի է ըմմա, հէ-րիֆին ինչ ըսիմ, սօղրու աիւրիսթ կործ կը տեսնայ. հի-մա կանք քու կինկըհար աղայիդ, ըս հէրիֆը շատ անօ-րէն մարդ է եղեր. ըմմա կ'ըսին քի կամաց քաղղէն վախ-ցիր. նա նէ, նա նէ, ինսաֆը վօր ճուվալ աըրիր հէ'յ զալըմ մարթ, հիմա քու արտդ 3000 պօլոը թէք փարայի մը պէս կ'անէ, մի' տար, էկածին պէս կ'ըսես քի, քաղ-քէն 4000 զուռուչ տուին ընոնց տուի. պիտի էթամ թա-խիր անիմ, կը պերիմ քու փարադ կուտամ, ան էս կիտիմ պիտի չթողու օ պաչխասուն ծախես, կը կենայ կալին, ըն վախթը կուտաս փարան կ'ապասես զանա'աթըդ վէս-սէլամ. չուքի մեր զուլախլարի չէյնիէճէք վարժապետը խօսք մ'ունի տէ էմմէն օր կ'ըսէ. «տեք միմեանց հակա-ռակ կան», ան մունի չի թողուր, օր ըս կեղը քաղքէն պաչխա մարդ օտք կօխէ, չունքի ըն վախթը ալ չի կըը-նար անկըճին կընովը խեղթեր ու առներ:

Կալօ. — Էֆֆէրիմ, իմչէ Աւետ, հանի տը խօսքիդ հէչ ըսելիք չի կար. կլոխչ ալըրոտ է ըմա, տէկիրմէնջի չես եղեր. անէլու է ախպար անէլու. ըսանկ, ընանկ սը-ներնիս մէր ծէսքովը պիտի ալըրենք:

(Տղան) Աղան ու չարչի Անտոնը եկան վարն են քեզ
կը կանչեն, (եւ կերթայ)

Կարօ. — Իմիչէ Աւետ, քալէ նը ծիանը տեղաւորենք
տէ կանք, հընտէ լաւ մտիկ արէ:

Աւետ. — Դու կընա տէ ուշացիր, ես ըհա հոս միւ-
սէնտէրէին տակը կը պահոտվիմ, հըլէ նայիմ քի սըվոնք
իրարու հետ ինչ պիտի խօրաթին:

Աղան. — Պարոն Անտոն, այս անիծած գիւղացւոց ալ
տուները շիտկէ շիտակ նստելու, պառկելու տեղ մը չի կայ,
մանաւանդ ամառը, գիշերը մարդ սաստիկ կը նեղուի սիվ-
րիսինէկէն եւ լուէրէն ի բաց առեալ միւս խոշոր հողե-
ւորները սրոնք կարծես օրտույով կը թափին միսաֆիրին
վրան:

Անտոն. — Շատ վախըթ կա՞յ օ գիւղ էկած չես՝ ըս օր
զըհար արտերդ կը պըտըտիս. կիտե՞ս հողերդ զօրլի հողեր
են, եանի աչք չսաճեն, մաշալլայ ըսելիք չի կայ, եզը
պառկած տեղը կ'արթէ:

Աղան. — Հըպա, ըն սէհէթը, հիմա սը թէլպիս շանը
հետ գործերնիս լըմնցնենք՝ ան ա հետերնիս առնենք, ե-
թանք քիչ մը արտերը կը պտըտինք, ընկէց ալ էճէլէ
քաղաք էթանք. հէմ էս կը նէյիմ օ թէզ մը ըսօր թախի-
րը առնենք վերջացնենք. ջուքի տու չիտես, ըս կոտ
կլոխները պաշխա ճանալար են ըսոնց ինսաֆ անողը մարդ
չէ, քիչ մը եթէ ուշացնես մէկալ ժամուն պերաննին կը
փոխեն: Ես արգէն միտքըս գրեր իմ բոլորովին ձեռքեր-
նուն պիտի առնիմ. բայց դու ալ աշխատելու ես, ուզա-
ծիդ պէս ապրանքներդ ծախէ, քանի սր կընաս, մէկին՝
երկուք, իրեք էվէլ ուզէ՛. տուն արգէն հող առնելու փա-
փաք չունիս, եւ ի՞նչ պիտի ընես, մանաւանդ որ այս
գիւղը հազիւ մէկ մարդու մը կը բաւէ եւ այդ մարդն ալ
ես եմ. հիմա գալու ըլլայ նը, գիտե՞ս ես համարդ:

Անտոն. — Ի՞նչպէս չէ. շարունակ քեզ պիտի գովեմ,
օ վախնայ, արտը թանկ ես տուեր պիտի ըսիմ. նէ իսէ
աղօթք արէ աղային կենացը օր քեզ խնայելով՝ էվէլի
փարա է տուեր. լաքին ինծի ի՞նչ կայ, հիմակուրնէ ըսէ՛

իմ մատիս ինչ քակուճ պիտի զէրնես, խօշ դու կիտես օ, ես պարսպ տեղը պիտանս եազլամիչ անելու վախըթ չունիմ, չէ նր իմ ինչո՞ւս պէտք, դուն արտ կը գնես, Տիւն-կիւր Կալօն կը ծախէ. «նէ՛ իւսթիւմէ Փարզ»:

Աղան. — Մօ Անաօն, արթող տուն ալ էրկան կ'անես, տասը տարի է որ դու այս գիւղը կ'երթաս ու կուգաս. եկած օրէդ պէլլի ես ի՞նչ գիւեմ քեզի ի՞նչեր չի վաստըկցուցի. միտքդ չի գար, հարուր դուրուչ սէրմիյէ չունէիր, զօճա կէզը պիբէթթի զանտուրմիչ արի, քեզի միշտէրի եղան, չէնը չարչի Ուսէփը քեզ հիմա շատոնց փախցուցեր էր. դու գիտես որ ես քու քերիդ աչք չունիմ, Աստուած տայ տահա աւելի վաստըկիս, լաքին կարծիք կ'ընեսմ քի մտքէդ հաներ ես մեր իրարու հետ ունեցած դաշնադրութիւնը. չէ՞ որ ես ու դու հինգ տարի էսէջ ի միասին պարսպար խօսք մէկ արանք օր, հէր ինչ զըտէր արտ, տուն որ ծախուի, միշտ ինծի փէշ պիտի քաչես. ես ալ ծէսքէս կալածին ղէտէր աշխատիմ քու ջիւմազ հախերդ բուսցընիմ եւ միշտ կեղացիքը համոզիմ որ քենէ առուտուր անեն, ու չի թողում օր ուրիչ չարչի պիտա բռնէ:

Անսօն. — Ծնորհակալ եմ, զաթի էս քու աղայութիւններդ շատ իմ տեսեր. զաթը ըս կեղին մէջ էսէջ Ասուած, ետքը դու, քէնէ ետքն ալ ես. դուն օ քու խօսքիդ վըրայ մէօնկէմ կեցեր ես, իմ թարաֆէս քեզի պօյոլս թուղթ, որ չէշիտ որ ուզես, ես հազըր եմ. դուն իս լաւ մը հասկըցած ես, ես իմ քերիս, քիսպիս ղուլն ու քէօլէն իմ, ըսկից տէօ Հինտիստան հինգ փարայի դուռ օ տեսնամ չի քօ՞յ, ընդըտէ կը պզտիկնամ, ընդըտէ կը պզտիկեամ օ, մինչեւ անգամ ասեղին ծակէն կ'անցնիմ, ըն հինգ փարան ձեռք կ'անցընիմ: Հիմա աս կեղը մեր էոջեւը մանդալի պէս է, դու խառնէ ես տաքնամ. ես խառնիմ դու տաքցիր. խօսք մէկ Ասուած մէկ: Զաթի խեղբերուն անդըլը լաւ ենք աւեր. իմացա՞ր մի ծառայ եմ, տուն խաչէ, արտերը ամերնուն առ. ես ալ կը փեթթիմ վրանին մէճէլ չիմ թողուր՝ ընանկ օր նեղը մնան կան ձեռքդ պագնին ու մալ միւլք թէսլիմ անին քեզի վէսէլամ, իմացար մի հիմա

ծառայ եմ. ինձի չարչի Անտօն կ'ըսին, էկէր իրեք օր էտէջ ծնած ըլլայի մօրս փորէն էմէլի սատանայ մը պիտի գայի օր՝ տրնա կէթսըն. հէմ դէլէմիս թարաֆէն ս զաննը չանես քի ետեան իմ. էմմէն տիւտիւկէն ալ կը չալիմ. թուղթ պանալ, երազացոյց կարթալ. ճերմ կապիլ, հէ-քիմութին անիլ, տիրացու, տէրտէր, էմմէն չէշիտէն ա ըէնկ ու ըէնկ քովս կը գտնուի, հէմ առանց սիլէճէկի:

Աղան. — Զաթի ես քեզ կիտիմ, ես ալ այդ տեսակ սովասէր, կիտնական, քրիստոնեայ, ճարտար մարդը կը սիրիմ. առն շատ պիտի էտէջ կաս. իլլէ քի քանի օ մեծի խօսքէ ալ գուրս չես էլլար. իշտէ հիմա սըրան է՝ քեզ տեսնամ, քաջութեանդ օրն է, սը մեր մարապա կալօյին խելքը նէյիմ ինտօ տօլազը պիտի գնես. Ասուած վկայ թող ըլլայ օր, էկէր ըս օր թախիբը առնինք նը, կալին էկո՛ր արտին վրայ կեցիր, ցորենը ելածին պէս, սօսաւ մը ցորեն պոնէ տար ջօլուխ ջօճուխովդ կի՛ր, մօրդ կաթին պէս հէլալ թող ըլլայ:

Անտօն. — Եէն մնաս, շնորհակալ եմ, Ասուած մէկ օրդ հազար անէ, երկան արեւ ըլլաս. քեզի պէս ազաներուն ես ոտիցը հողն եմ. լաքին հրամանոցդ մէկ խնդիրք մ'ու-նիմ. ումուտ ունիմ օր ըս անդարիաս կը տանիտ: Ըս կե-զին մէջ ես մէկ տուչման մը ունիմ, ծին նալեր էտուէս է ինկեր, ինձի չի սուած զարսը չի մնաց, հէմ լաւ ա կը ճանչես, ինքզինքը էպպէյի պանի մը տեղ կը գնէ. չունքի քանի մը այր բեն կուլ է տուեր. դեաինն անց-նելիք մ'օր հէ՛չ չի քայ, իմիչէ Աւետը արհա՞. հէջ նէյի-քի սը տասը տարլան մէջ կոտի մը տեղ ծախած ունի. հէմ կէզացոց խրատ կուտայ քի՝ իշ կ'անէք արէք հողեր-նիդ մի՛ ծախէք, առեր փալեր է փէչս, իլլէ ընկէ ալըշ վէրիշ մի՛ անէք. չարչի Աւետիէն առէք, ան ածան կ'ու-տայ. տունս աւըրեց՝ տունս, եանի ծէոքէս կայեա մսերը քէլիթիթիտով օ փէթիթիմ, սիրտս չի հովահրիր, տը մէյը որ կեզէն տէֆ անելուն ղօլայը. պիւթիւնին մըճէզը փը-չողը ան է:

Աղան. — Ծօ նը կախարչ տիրացո՞ւն, պազի հոս կա-

լօյին օտան կը տեսնամ, կը նէյրմ օր դազէթայէ ա խա-
պար կուտայ, հէմ ժամուն թաղական ալ է. սանքի ալ
մարդ չին կտեր. լաւ, առ ինէ կիտցի՛ր. ես ընոր պոչը
ընանկ տրուան արան թողում օր, ծանը օխտը դաթ կեա-
նին տըկէն դայ: (Կալօն կուգայ):

Կայօ. — Պարի էս եկեր աղա, կալդ ի պարին. ինտոր
էս՝ լա՞ւ ես. աֆ կ'անես, քիչ մը ուշացանք ամա, արթող
ծերն ենք. տէօ ծիանը ալաֆեցի նը էպպէյի վախըթ ան-
ցաւ:

Աղան. — Հոգ չէ, առ ի՞նչ ըսել է, մենք խօշ իրար
նոր պիտի չի գիտնանք. սանահար, օրհնեալ է Ասուած,
առ քանի տարի իրարու հետ աղ ու հաց կ'ուտենք, սա-
նահարս ինտօ՞ է, ինչալլահ սաղ սէլիմ էք ես՝:

Կայօ. — Կոհանամ Պարգեւողին, քէտէրսիւղ ենք,
մանչուն քիչ մը աշուրները պոնեց ըմա, նէյիտէ թեթեւ
անցուց. շիտակը, անցած օր թայ քաղաք Անտօն ախպօրս
քիչ մնաց օր խապար պիտի ղրկէի օ կար նուսխա մը կը-
րէր, լաքին մեռնիմ անընիկան Սուբ Կիրակոս պանը ըս
տեղանը չի ձգեց:

Աղան. — Լաւ էք կիտցեր, ըս մեզ պարոն Անտօնը
թէքին մարդ չէ. հըլէ քաղաք կաս տէ, սէյիր անես.
Թուրք, հայ կիչեր ցորէկ գուռը կուր են, բայց ինքը
անգամ մը առուտուրի, տուստանքը, իլլէ ծեր կեզը սոր-
ված ըլլալուն՝ շատ տունը չի կենար. ես աչքովս տեսի
իմ իր միւճիւզաթը. շիտակը երեսին է տէյի չէ, ընաիբ
մարդ է:

Կայօ. — Մենք ա տողրուսի ըսելիք չունինք, պազի
զբացիներ առուտուրին համար քիչ մը ղըեախ է կ'ըսին,
չէ նը պսչխայ թարսֆէ նօխսանութիւն չունի:

Ահսօն. — Չեր կեղացոյ մէջ ընանկները կան օր հրա-
մանքդ վրադ չառնես, պօտիկ հալուն պոչ կը գնեն, զաթը
ըս աչխաքը ընանկ է, տասը մատդ մօմ անես վառես՝
կինէ պան մը պիտի ըսին:

Աղան. — Նէյիտէ թողունք ըս խօսքերը, ես շատ կե-
նալու ժամանակ չունիմ. սանահար, ի՞նչ արիբ արաին

քէյֆիյէթը. ախպորդ հետ միւշլէրէթ արիք վերջացուցիք ինչալլահ. էս եկայ օր եթանք քաղաք, թախիրը տաք խալըսինք, փիսութիւն մ'է թող օրթայէն վերնայ, կորսուի:

Անսօն. — Շիտակ է Տիւնկիւր Կալօ, աղան հէչ մէկ վախըթ մը քու զարարդ չուզեր, ես ըս պօյս իմ էկեր, իրարու դուռ դասն դրացին ենք, արհա ընոր մըջուսի մը վրայ կոխիլը չիմ տեսեր. ըտոր պէս ֆախըր ֆուխարէին թուրը քաշող իշխան իւրան, թիւրան փնտուս չես կըրնար կտնար. տո՛ւր թող էթայ. ան ըտոր տեղը քեզի հազար կը վաստըկցընէ:

Կալօ. — Անամ պօպօմ կինկըհար աղա, պան մը պիտի ըսիմ ըմա, կիւճէնմիչ չըլլաս. հէր իչ զըտէր օր էս հրամանքիդ խօսք տուի, լաքին ախպարս դայիլութիւն չունի, արուն կ'անիմ կ'ըսէ հեղմա չըսեր. էս ծախու արա չունիմ, իմ արտիս 4000 ղուտուչ կուտան կ'ըսէ, անկարէլի պան է, հօրէնական մնացած պէրկիւզար մ'է կ'ըսէ, թող կինկըհարըս տէօ կալ թէհէմմիւլ անէ, ֆայիզով փարան կուտամ կ'ըսէ:

Աղսն. — Տուն մեծ էս քի ախպարդ:

Կալօ. — Էս մեծ իմ, էս մեծ կօրեռային իմ եղեր, ան կօրեռայէն էրկու տարի ետքն է եղեր. իշտէ իւր ըլլալէն վեց ամիս ետքն ալ լուսահոգի հարըս, օրերը ծեղի, մեռեր է:

Աղսն. — Ասուած լուսաւորէ հոգին, քանի որ դու մեծ ես ան ի՞նչ խառնուելիք ունի, քու զէմօ պերան պանալու ի՞նչ հախ ունի:

Կալօ. — Ընանկ է ըտոր ըսելիք չի քայ, հախ ունիս հոգուս սատկիմ կինկըհար պէկս, լաքին հիմա ըտ զըտըրուկ պանին համար ա ելլանք տանը աիւզէնլիկը աւըրենք. ատ ա մախպուլ պան չէ՝ դու դայիլ կ'ըլլաս օ իրարմէ պաժնըվինք, զաթի տակն ու վրան երկու ախպար ենք:

Աղսն. — Ղայիլ ըլլա՞լ մի, իմ ըլլայ, կըլտիք քառսուն տեղաց կը կոռեմ. մեծը կեցած տեղը պղտիկը ի՞նչ

խառնուելիք ունի, առ կիտե՞ս ինչ կը դառնայ հէրիֆին ըսածն է. «Մաթոս քէյհա, Թաթոս քէյհա, պիր էվտէ վար օթուզ քէյհա» :

Անօտ. — Տիւնկիւր կալօ, ես քեզ էպպէյի սէօզ աղնար, պիւշկիւն մարդ մը զաննը կ'անէի, հէչ ըտանկ լախըտու կ'ըլլա՞յ. դուն ա մարդ ես տըհա, հէչ էրիկ մարդը խօսքէն կը դառնա՞յ. մէ էմ դու չօճուխ ես, հէմ արտդ երկու զաթ կ'նով ծախեր ես, աղան օր ես չի դառնար, դուն պոչդ խաղցընելով, մեծիկ նետելով ծեռքն ալ պագ տէ եալվար եզի՛ր, էկէ տակը պաշխա պան մը կանը առ ա չիտե՛ս :

Անէս. — (Միւսէնտէրէին տըկէն կը թոնայ) : Մօ հէրիֆ պան մա կայ երկուս ա՛ ի՞նչ առեր փակեր էք մարդուն եախան. ի՞նչ սառկած էչ էք կտեր նալերը կը փէթթէք. ծան չի հանիմ ըսի ըմա ալ համբերութիւնս հատաւ. զորով պիտի դապտէ՞ք հէրիֆին արտը. իչտէ չիմ տա՛ր, սաթմամ կ'ըսէ հէրիֆը. հէմ Անտօն ես ինչ դառնաղըտի ես, դու ի՞նչ պօտիկ ունիս մէջը. չունքի տասը սարի է հերիք չեղաւ արած սատանայութիւնդ, օտքըդ կտեր տէ ըս կեղը չի մտնայիր տուն ավըրող անօրէն :

Աղան. — Է՛, շատ էտէջ կացիր, ծօ, զո՞ւ վով, կիտի սըրիկա, հըլէ նըվօր կերած սպուրը տես, ծօ կիտե՞ս ինծի վով կ'ըսեն, քաղաք օ իչնամ քու զըննախներդ քակել կուտամ, կիտի սըմսըրուկ, ինտո՞ր, պէտիհըվա փարա կայ եուտմիչ կ'անէ՞ք :

Անէս. — Վով կ'ըլլա՞ս եզիր, անօրէ՛ն, անխի՛ղճ, կլոխդ ուտէ փարագ. ի՞նչ, կէօյէ իս քաղքով պիտի վախցընես՝ մէկեր ես եապանի իմ, հէչ քաղաք, շէհրխտան տեղ տեսե՛ր իմ օ, խեղքովդ եկեր կեղացուց ջալըմ կը ծախես. ապրին աղբին պարեսիրա իշխանները, զաթի ծեղի պէսերուն օ մնայ, մեր տունը պիտի քակէք, ըհա սըվօր պէս եալլոգները (մատնանիչ ընելով չարչի Անտօնը) խառներ էք էոչկենիչ կը վաղէք կեղանը. ի՞նչ, լէչ կա՞յ. անցան ըն օրերը, ինէ 3000 զաւուշ կայ Տիւնկիւր կալօին արսին, ի՞նտօր, աչքդ կը խմէ նը հրամմէ մէյտան :

Աղան. — Սատանան կ'ըսէ քի ել առ թէքմէկիդ տակը ջըղնամիշ ըրէ. ծօ, քու էտեւէդ կարմիր մօմ ղըկեցի՞նք:

Աեւս. — Զաննը կանիմ քի զապա օսկոս կայ կոնակդ. հէջ արապայի զաչուխ կերեր ես, կ'ուզես օր ընա հոտ քեզ փրէյի պէս սըմքեցընենք:

Կարօ. — Ճանրմ, ի՞նչու, ի՞նչու. ըտ խօսկերուն ի՞նչ տալիք ունիք. անուշութիւնը կեցած տեղը, նէֆիլէ իրար ինչո՞ւ կը խածնէք, ախպար էս ծախու արտ չունէմ:

Աղան. — Ի՞նչ, ի՞նչ, գաթի քու էճէլըդ էկեր է, Կալօ. սանահար, սանահար ըսանք, կատղեցար. նէյէ քի էս քու կխլուտ ինչեր պերիմ. կիտի սէնի պէնի պիլմէգ. Ասուած եա՛ ինձի կուտայ, եա քեզի:

Կարօ. — Ատամ ծեռքէդ եկածը ետ մի թողուր. չունե նամ քեզի պէս կինկընարը օր աչքդ մալիս էս տնկեր. հէրիֆ, գաթի ըն օրն որ քու օտքըդ մեր տունը մտաւ, պէրէքէթ մէրէքէթ չի մնաց. կիտ'ես քի երկին քը պղինձ կռեցաւ, կիտինն ալ էրկաթ. ունիմ ունիմ վէրն Ասուած ունիմ:

Անսօն. — Ե՛լ, ազա ե՛լ, տընա կեցեր ես, երկու սուվարիի խօսք է, մէյմը սըլոնք երկուան ալ իչուն տըրախտը նէտէ օ պօչերնին շիտկի:

Աեւս. — Էֆֆէրիմ ծօ, էֆֆէրիմ նուսխաճի Անտօն, տը խօսքն ալ օր չըսէիր ա, զառղընրը սեւ պիտի հաղնէին, չըսես ալ ի՞նչ պիտի անենք, հալերնիս եաման եղաւ Տիւնկիւր Կալօ, Աղան մեզ պիտի կախէ, Անտօնն ալ ջուլանը պիտի քաչէ. ելէ՛ք, ելէ՛ք, անօրէ՛ններ, ըս էրկիրը խօշ ծեզի չի տուին: Ազդը գատ ունի, դատաստանն ունի, նայինք եա՛ ծեզի կ'ըլլայ եա մեզի: Բնա էս կ'իթամ Առաջնորդարանը:

Աղան. — Ահա ես ալ կ'երթամ Հեֆի երբ:

(Անտիպ գործեր)

Գ. Բ. ՄԱՄԻԿՈՆԵՍՆ

Հաւաքեց Գ. Նարեչեան

ԳԻՏՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԴԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՅԳԻՆ ՄԷՁ

Փարիզի Գիտութիւններու Ակադեմիայի նախագահ,
Պ. Մորիս Լէվի, արտասանած է հետեւեալ խիստ շահեկան
բանախօսութիւնը, այդ բարձր փողովի տարեկան հրապա-
կային նիստին մէջ:

«Ահաւասիկ, Պարոններ, մեր վերջին փառաւոր նիս-
տը այն դարուն, ուր գիտութիւնը իր ամենէն մեծ տեղը
ունեցաւ:

«Առաջին անգամն է որ այս իրողութիւնը կը յայտ-
նուի: Ու մենք մարդոց առաջիններն ենք որ, տեսակ մը
հրաշքով, գիտութեամբ հանգիստտես կ'ըլլանք երկրային
երկու անհունապէս տարբեր կեանքերու, այսինքն այսօր-
ւանին եւ վաթսուն տարի առաջուանին. երկու տարբեր
կեանքեր՝ բաղմամբիւ հանգամանքներով, որոնք հեռաւոր
ժամանակներու մէջ ապահովաբար իրարմէ բաժնուած պի-
տի ըլլային հարիւրաւոր եւ հազարաւոր տարիներով, ա-
նանկ որ մենք իրաւամբ ապրած պիտի ըլլանք այնպէս՝
իբր թէ ծնած ըլլայինք երկար դարերով անջատ երկու
անգամներ:

« Ի՞նչու համար կեանքի այս վերանորոգումը մեր ժուրերը պատահած է եւ ոչ առաջ: Այս բանը սկզբնաւորութիւն մը կամ դիպումս մ'է արդեօք: Միթէ՞ կ'ապրինք պատահական (fortuit) դարի մը մէջ. կամ նոր ու տեւական թուականի մը բացումն է՞ ան, որ պիտի ըլլայ, այս աշխարհի վրայ, իբր գիտութեան արդիւնատու դարագլուխ մը:

« Այս հարցումներուն վրայ է որ կ'ուզեմ ձեզի ներկայացնել քանի մը համառօտ խորհրդածութիւններ: Ատկէ պիտի հետեւի որ մեր դարը կազմուած է անցեալին մէջ գիտական մտքին ցիրուցան փոշիովը, եւ թէ նոյն իսկ մեր աչքերու առջեւ պէտք էր որ այդ միգամամը (nébuleuse) ընդուներ իր սկզբնական պայծառութիւնը:

« Ամեն բանի մէջ եւ ամեն ատեն փորձառականը կանխած է սկզբունքը, տեսութիւնը: Օգտակար արհեստները գիտութեանէն առաջ երեւցած են. բայց, հազիւ ծնած, այդ սննդատու մօր պէտք ունեցած են կատարելագործուելու համար: Չայն կանչած են, զայն միշտ հարցուփորձ ըրած են: Այս կոչերէն ու հարցերէն է որ գիտութիւնը ծագած է: Արհեստները գործառնութիւնները եղած են եւ գիտութիւնը անոնց գործարանը դարձած է: Ինչպէս միշտ, հոս ալ, գործառնութիւնը ծնունդ տուած է գործարանին, ու յետոյ գործարանը աճեցուցած ու աղնուացուցած է գործառնութիւնը: Այս բանին համար բնութիւնը երկար տարիներու պէտք ունի, ահաւասիկ ինչու համար գիտութեան զալուսար ուշացած է: Իրողութիւն է, — որուն պատճառը քիչ մը վերջը պիտի բացատրեմ, — որ մարդկային ճարտարագործութեամբ լուրջ արժէք մը արաադրելու կարող գիտութեան գումարը կազմուիլ սկսած է միայն վերջին դարու վախճանին: Մինչեւ հոն, անցեալին ամենէ գեղեցիկ գիւտերը ու ամենէ մեծ գաղափարները ամուլ մնացած էին:

« Այսպէս, քսանըօրինգ դար կայ որ յոյն փիլիսոփաները ուսուցած են, բնագիտական յայտնի ճշմարտութեան (axiome) մը պէս՝ այն մտածումը (pensée) թէ՛ ոչինչ կը գոյանայ ոչինչէ եւ ոչինչ ոչինչութիւն կը գաւա-

նայ: Ճիշտ այդ քսանըհինգ դարերուն պէտք եղաւ որպէս-
զի այդ ըմբռնումը բնազանցութեան երազանքէն մերկա-
նայ՝ ստուգութեան սահմանին, գիտութեան յստակու-
թեան մէջ մտնելու, այսինքն արգիւնատու ըլլալու հա-
մար: Այս զառամութեան վերանորոգումովն է որ մեր դարը
իր ամենէ ճոխ պարուրանքը հիւսեց, իր գիտական մեծու-
թիւնը եւ իր իրական բարգաւաճումը երկնեց:

«Յունաստանի ամենէ հին փիլիսոփաներու ճիշտ այս
չըջանէն է որ կը թուականեն մարդուն առաջին ստացած ծա-
նօթութիւնները՝ մագնիսականութեան եւ ելեքտրականու-
թեան վրայ: Թէ այդ երկու ֆիզիքական ազդակներու մէջ
յարաբերութիւն մը կայ, զայդ նշմարել կարողացան 15րդ
դարու մեծ նաւարկողները՝ իւրաքանչիւր անգամ երբ փո-
թորկոտ ժամանակներու մէջ, կողմնացոյցին անհրաժեշտ
դարձած պահուն, այս վերջինին կայծակի ազդեցութեան
տակ անկանոն ուսումները տեսան: Անտարակոյս հոտ կը
տեսնէին անբնական ոյժի մը գոյութիւնը, որ միացած
էր տարրերու զանոնք ապահովօրէն կորսնցնելու:

«Մինչև 1801 թուականը հասնիլ պէտք եղաւ, այս-
ինքն այն նախատարրական հնարումը, որ կը կոչուի
Վոլթայի բարդը (pile de volta), եւ էօրսթէտի գիւտը, ու-
րով Վոլթայի հոսանքին կողմնացոյցին վրայ ազդեցութիւնը
կ'ապացուցուէր, որպէս զի Ամիէր կարենար վերջապէս
հաստատել ելեքտրականութիւնն ու մագնիսականութիւնը,
ասոնց ընդցուլումը, ուրիշ, Ֆարատէի մակածական (in-
duction) աշխատութիւններով, առաջացած է մեր ելեք-
տրական ճարտարագիտութիւնը՝ ամենուս ծանօթ իր հրա-
շալիքներով:

«Շոգէին ուժը Ալէքսանտրիայի դպրոցէն ուսումնա-
սիրուած է: Բայց գիտութիւնը կը պակսէր եւ միայն մեր
դարու սկիզբն է, Ուաթի առանձնարտօնութիւններու լը-
րանալէն յետոյ, երբ շոգեմեքենային շինումը ազատ ե-
ղաւ, ան սկսած է իր թռիչն ստանալ, ու տակաւին ա-
ռանց գիտական առաջնորդի: Իր հիմը ճնշումի սկզբունք-
ներու վրայ էր դարձեալ: Զերմութեան ոյժի ստեղծագոր-

ծուծիւնն է որ, վերջին կէս դարու մէջ, անոր սուսու
իր կարողութիւնը եւ թոյլատրեց ձեռք բերել չորս հինգ
անգամ նուազ քանակութեամբ անուխի սպառումն յոյժ մը :

«Թնդանօթի վառողը որ պէտք էր այնքան աշխարհս
յեղաշրջեր, գրեթէ հինգ դար դրաւ զայն յեղաշրջելու հա-
մար : 17րդ եւ 18րդ դարուն միայն լրջօրէն պատերազմի
արուեստը բարեփոխեց ու, այսօրուան ու երբեմնի թնդա-
նօթի մէջ այնքան տարբերութիւն կայ որքան այս վեր-
ջինին ու պարզ պատուգաւոր հրացանին մէջ :

«Թնդանօթը այսօր, հրահանգիչ աշխատանոց (labo-
toire) մ'է, զոր երբէք տրամագրած ըլլայ գիտութիւնը :
Եւ մի կարծէք որ այն աշխատանոցը, որուն վրայ ձեզ կը
խօսեմ, իրեն ռեաֆրիզ (հակալզեցիկ նիւթ) ունենայ
մարդկային մարմինը :

«Նախ ժամանակակից թնդանօթէն է որ առաջացած են
այն միւս խաղաղական թնդանօթները, անոնք որ կը կոչ-
ւին պայթուցիկ մեքենաներ, փեթրօլի մեքենաներ կամ
պայթող կազի մեքենաներ, որոնք այնքան ծառայութիւն-
ներ կը մատուցանեն մանաւանդ ինքնաշարժականութեան :

«Յետոյ այս մեքենաներու մէջ ձեռք բերուած այն
մեծ ճնշումներն են որ սուին շոգեմեքենային մինչև 20-
25 հազարակրամ կարողութեան ոյժ մը՝ որուն հասնիլ քա-
նի մը տարիներ առաջ դեռ անկարելիութիւն կը համա-
րուէր : Ատկից է որ ծագած են կարողութիւնն ու կֆօնտին
20000 եւ 30000 ձիու ոյժով շարժիչներուն որ կը շրջա-
գային ծովին ալիքներուն վրայ փոքրիկ քաղաքներու
չափ ժողովուրդ ունեցած նաւեր, եւ որ 100-120 քիլոմետր
արագութեամբ կ'ընթանան այնքան գիւրուութեամբ մութ
գիշերը՝ որքան լոյս ցերեկը : . . .

«Մեր դարը զբաղեցնող գիւտերէն միայն օդանաւն է
որ հին ծագում մը չունի : Անտարակոյս ասիկա ալ այն
պատճառով է որ զայն կատարելապէս յաջողցնելու հար-
կաւոր գիտութիւնը տակաւին ձեռք բերուած չէ : Կը մխի-
թարուինք սակայն մտածելով թէ քսաներորդ դարու մեր
յաջորդներն ալ մեզմէ աւելի բազաւորութիւն մը չպիտի

ուսնեան այդ կէտին մէջ: Առաջին Մօնիօլֆիէսներու երևուածը բնականաբար ազգային մեծ դէպք մը եղաւ: Ատոր վրայ կը խօսուէր արքունիքին մէջ, քաղաքը: Արաւիկո կը ծանուցագրէ թէ, երբ աը Վիլլըրուա մարաջախտուհին, որ նախապէս հաւատալ ուզած չէր, տեսած է իր սեպհական աչքերով, առաջին օչապարիկին օդին մէջ բարձրանալը՝ իր մէջ կրելով Շարլ բնագէտը, գոչած է. «Իրօք, ոչինչ անկարելի է մարդոց. հաւատտի եմ հիմա որ մահուան դարմանն ալ պիտի գտնեն»: Ոչ միայն օդապարիկով շէնք-շնորհք ճամբորդելը մօտալուտ իրողութիւն մը կը թուէր, այլ եւ օդային ճամարիտ պատերազմներու վերայ կը խորհուէր: Խիստ կարեւոր պահանջ կը նկատուէր ամբուլթիւնները այս օրինակ յանձակողականներու դէմ պաշտպանողականի մէջ դնելը:

«Երեսուցի չափ տարիներ կ'անցնին: Ոչինչ փոխուած է, ու բաւական հետաքրքիր պիտի ըլլայ տիրող խանդավառութեան հետ յիշատակել. թէ եւ խիստ բնական, այն նախագուշակութիւնը, զոր ըրած է, մեր զարու առաջին տարիներուն իսկ, ամերիկացի մեծ էնփէնիէօն մը էվանս, ինքնաշարժներու գրութեան նախահայրերէն մէկը. «Ձեմ սարակուսիք, կ'ըսէր էվանս, որ իմ մեքենաներս չկարողանան վերջագէտ նաւեր Միսիսիփիի հոսանքին դէմ քալեցնելու եւ կառքեր՝ պողոտաներու վրայ օդապար կերպով: Ժամանակ պիտի ըլլայ որ մարդ պիտի ճամբորդէ քաղաքէ քաղաք՝ չօգեշարժ մեքենաներով վարուած կառքերով, որոնք պիտի սլանան քոչուսներու քոչիցին արագութեամբ. . . Առաւօտուն Վաշինկթօնէն կառքով մեկնող ճամբորդները պիտի նախաձաչեն Պալթիմօր, պիտի ճաչեն Ֆիլադելֆիա եւ պիտի ընթանն Նիւ-Եօքք միւսնոյն օրը. Մեքենաներ նաւերուն 10-12 փարսափ (milles) կարել պիտի տան մէկ ժամու մէջ եւ Միսիսիփիի վրայ steamersներու ընթանալը պիտի տեսնուի, ճիշտ այն նախագուշակութիւններու համաձայն որ երկար տարիներ առաջ երկած են:»

«Ասկից աւելի ճիշտ կարելի չէր նախագուշակել, մինչ-

չեւ ծանուցուած թիւերու մէջ : Կը տեսնուի որ մեծ էնժէ-նիէօնը հարիւր տարի առաջ իսկ ինքնաշարժներու մէջ կը գտնէր միակ միջոցը թոչուներու հետ մրցելու համար :

«Ատկից ի վեր ինչպէս Ամերիկա՝ այնքան Ֆրանսաօղա-յին ճամբորդութեան վրայ մտածուեցաւ : Բայց կարելի պի-տի ըլլա՞յ ըսել արդեօք թէ կը գտնուինք այն վիճակին մէջ ուր պիտի կրնանք գիտութեան այդ հնարումին վրայ է-վանսի նախագուշակութեան պէս մտածում մը ունենալ, թէեւ տակաւին ինքնաշարժը թոչուներն արագութեան հաս-նելու կատարելութեան չէ հասած եւ տարակուսելի ալ է դեռ : . . .

«Մինչեւ հիմա ըսածներս կ'ապացուցանեն թէ միայն մեր գարու ընթացքին մէջ է որ գիտութիւնը լրջօրէն ա-ջակցած է անցեալին մէջ եղած գիւտերուն : Այդ պահուն սա հարցումը կը տրուի թէ ի՞նչու ատիկա միայն մեր գա-րուն մէջ :

«Ատոր պատասխանելու համար հարկ է ընել հետեւեալ գիտողութիւնը. որչափ ատեն որ մարդ կարծեց թէ երկիրը մարդոց անխախտ կեդրոնն է, որքան ատեն որ անոր ձեւը չի ճանչցաւ, որքան ատեն որ հաւատաց Լիւզբէսի հետ, թէ չէին կարող մեզի հակոտնեայ (antipode) բնակչութիւններ գո-յութիւն ունենալ, որովհետեւ գլխիվայր քաղելու պիտի պարտաւորուէին, խիստ բնական է որ բնութեան ծած-կուած ոյժերէն բան մը չպիտի կրնար ճանչնալ, ոչ ալ անոնցմէ օգտուի : Որպէս զի գիտութիւնը ծնունդ առնէր եւ ճարտարարուեստին աջակցէր, ամեն բանէ առաջ պէտք եղաւ քանի մը ազատ մտքերու, քանի մը հանճարի եւ յանդուգն մարդոց, որ գայն, գիտութիւնը, ազատագրէին իր անցեալ գերութենէն : Այդ մարդիկը երեւցան զրեթէ Վերածնութեան (Renaissance) ու միայն 17րդ դարու վերջն է որ իրենց գործը պսակուեցաւ տիեզերային ծանրողու-թեան, Նեւտոնական մեծ գիւտով : Ատկից ծնաւ նախ մե-քենականութիւնը որ կատարելագործուիլ սկսաւ 18 եւ 19 դարերուն եւ գտաւ Ֆրանսայի մէջ իր ամենէ մեծ առա-քեալները, ինչպէս Գլէրօ, Լատիլաս, Լը Վէոնիէ, Տըլօ-

նէյ եւ վերջապէս թիսսըռան որ ձեռք առաւ Լափլասի ահագին գործը, Երկնային մեքենականութիւնը (la mécanique céleste), զայն մեր դարու գիտութիւններու հասողութեան մէջ զնեկու համար: Միայն մեռնողները կը յիշատակեմ:

« Երկնային մեքենականութենէն է որ Նէվտոնն ու իր յաջորդները, 18րդ դարուն, հետեւցուցին Ընդհանուր Մեքենականութիւնը: Միայն մեր դարու ընթացքին մէջ է որ կազմուեցաւ ճարտարագործական մեքենականութիւնը, այն զոր կը կիրարկենք ամեն օր:

(Շարունակութիւնը միւս անգամ)

ՍԵՒ, ՍԵՒ . . .



Տըխար է հոգիս, հագած սեր վիշեր . . .
Սիրքս կ'արիւնի խոցով կարեպեր . . .
Ծարաւ ւեր ունիս, սնկուն մեկ ծարաւ՝
Սիրել, սիրուելու: — Ա՛յս է իմ մեծ ցաւ:

Մար է ինձ հաւար ամեն ինչ . . . խաւար՝
Լոկ իմ հոգիս կուսայ կեանար
Սրնունդ ու յագուրդ. ու սեր սեր խոհեր՝
Լքեաւս սրտիս շարջ պսակն եմ դարձեր . . .

Կը սիրեմ գիշեր, հոգիս պէս սեր,
Ու երկինք՝ մըռա՛յլ, անկո՛՛ս, անարե՛ւ . . .
Եւ խոհերուս մեջ քաղուած անըզգայ՝
Կ'ուզեմ մըռայ միշտ, անչա՛րժ, մըշտսիս՛յ . . .

Կը սիրեմ ևսեր մեռնի՛ց, վերեզնա՛ն . . .
Սեր փոս մ'որուն շարջ հոգիս կուգայ ման
Երագներուս մեջ, եւ ուր պի՛ս հանգչին՝
Ոսկորներուս հետ՝ հառայնե՛րս վերջին:

Փարիզ, 19 փետրուար, 1898

ՀՐՈՒՇԱՆ

Խ Մ Ր Ա Պ Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Յոհաննէս Շաւարշի (Հրուշան) բանաստեղծութիւնս ներէն քանի մը հաս. միայն ունենալով մեր ձեռքին սակ, չպիտի կրնանք անոնց ամբողջութիւնը մասնաւոր հատորի մը մէջ ամփոփել: Մեր մօտ գտնուածները, «Սե՛ւ, Սե՛ւ. . .», «Իժ Երգս», «Սպասու՛մը» (Հնչակ), «Զմեռ» (Հնչակ), յաջորդաբար պիտի հրատարակենք Համալսարանի մէջ, այս համարէն սկսած:

Չ Ե Ի Ա Շ Ր Զ Ո Ի Մ

(Transformisme)

Ուսումնասիրեց

ՄԻՍՍԷ ՊԱՂՏԱՍՈՐԵԱՆ

7

Թե ի՞նչպէս վարդապետութիւն մը կը ծագի. — Զեւաչը-
ջուռի մեքոսը :

Պարզեցինք մեր նախորդ երեք յօդուածներով այն տատարոսային շրջանը ուրկէ ձեւաչրջուռի վարդապետութիւնը անցած էր հասնելու հոն, ուր անով պիտի տօնւէր արդի գիտութեան ամենէ գեղեցիկ օրէնքներուն մէկին թուականը :

Ինչպէս միշտ՝ այդ վարդապետութեան ալ կանխեց փորձառական խուզարկումը : Վարդապետութիւններ իրուի գոյութիւն ունին եւ չատեր ալ պիտի ստանան՝ որչափ ատեն որ նշմարուին մարդկային իմացականութենէն՝ կնճառա երեւոյթներու ամբողջութիւններ. բայց ատոնք դատապարտուած պիտի մնան ամուլութեան այնքան ատեն որչափ իրենց անկարելի ըլլալ իրենք զիրենք կառավարելու, առաջնորդելու :

Տեսութիւնները որպէս զի լաւ պատկերանան պէտք է յենուն մեթոտի մը վրայ, ուրեմն մեթոտ եւ վարդապետութիւն երկու անհրաժեշտ եղբներ են գիտութիւն մը ատաղ-

ձեկու համար :

Երբ գիտութիւնը տակաւին իր սկզբնաւորութեան մէջ կը գտնուէր, միտքերը կրակոտ աւիւնով մը կը բորբոքէին : Խեղճը ինքնավստահութիւն կը ստանար, պարզամիտ խղճով մը, ու տրամաբանութիւնը իր օրէնքներով՝ բնական օրէնքներու հետ կը գրկախառնուէր :

Փիթակորաս իր թիւերով միայն կը միասնացնէր ամբողջ երեւոյթները ու Պղատոն թիւերու տեսութեան վրայ կը հիմնէր ամբողջ տեսչերքը :

Արիստոտ քանի մը կենսախօսական երեւոյթներու վրայ հիմնուած, որոնք ընկերական եւ գործարանական կեանքի պարզ նպատակաւորումներ էին, բնական օրէնքներու առաջնորդող տեսութիւններ կ'ուզէր ստեղծել, ու այս վերջինները հազիւ գիտական կը կորսուէին զգացողական խուռն հայեցողութիւններու կոյտին մէջ :

Սա գաղափարն էր որ ամեն կողմ երեւան կուգար, ցուլել բոլոր քանակութիւնները եւ միութիւն մը միայն կազմել : Բայց սկզբնական այս փորձերը երկար ատենի պէտք ունեցան արդիւնքի մը հասնելու, մերօրս մը սակեծելու, որովհետեւ նիւթն ու իմացականութիւնը զիրար կը հակադրէին :

Պաքոն եւ Տէքարթ սակայն հասան իմացականութեան իտէալին, երբ խնդիրը սեղանի վրայ դրին բացարձակապէս եւ միմիայն փորձառական սկզբունքներով եւ ամբողջ բնութիւնը նկատուեցաւ մեքենական բացատրութիւն մը : Բոլոր կենդանի էակները պարզապէս գործիքներ հոչակուեցան, ուրկէ ամեն նպատակ առեւտարուած էր, եւ հոն պէտք էր խնդրին լուծումը փնտաել լոկ մեքենական միջոցներով :

Այդ վայրկեանէն մեթոտը կամ ուսումնասիրութեան ճշմարիտ ուղին գտնուած էր եւ ամեն կողմէ կենսարանական խուզումները խոնկեցան : Կենդանիները լաւապէս ուսումնասիրուելով անոնց յատկանիշները երեւան հանուեցաւ . զանոնք կարակելով անոնց կմախքը ճանչցուեցաւ ու այսպէս գաղտնիքի մը փրօսվեալութեան ամենահզօր սան-

ձը խնայականութեան ձեռքն անցաւ, բարդաստիակ մե-
րոքս: Պիւֆոն, ժօֆուուա Սէն Թ'իլէն հասած էին բնու-
թեան ծրագրի միակ տեսութեան մը եւ Բիւվիէ զանոնք
նուիրագործած էր յաղթականօրէն՝ տեսակներու անջնջե-
լիութիւնը (irréductibilité) հաստատելով: Գործարաններու
մէջ տեսնուած նմանութիւնները մղում էին Օվէն, Լամարք
եւ Ակասիզ կարծել թէ խիստ պարզ հանելուկի մը առջեւ
կը գտնուէին եւ զայն լուծել ջանացած էին այն մեթոտ-
ներով որոնք յաջողած էին բնական գիտութիւններու մէջ,
բան մը՝ որ պէտք է անկարելիութեան մասնուեր կենսա-
բանական երեւոյթներու կնճռոտութեան մէջ:

Այլազան տեսակներու մէջ նշմարուած նմանութիւն-
ներէն, որ միեւնոյն կազմուածքի անորոշ եւ դժուարօրէն
բացատրելի յատկագիծ մը կը վերհանեն, բոլոր տեսակ-
ներու ալ յասուկ ժառանգութիւն մը նկատուեցաւ, զոր
անոնք պահած են սերունդներու ահռելի ընթացքի մը մէջ,
ու անոնց իրարմէ ունեցած տարբերութիւնները զանազան
պատճառներու եւ միջավայրերու ազդեցութեան հետեւանք-
ներն էին: Լամարք զայս գուշակած էր, բայց ոչ բոլոր-
ովին հաստատած:

Բնապատմական գիտութիւններու կենդանական ան-
ջատ խումբերու մէջ հետզհետէ դատարկ միջոցը լեցուե-
ցաւ երկրաբանութեան եւ հնէաբանութեան գտած բրածո-
ներով, որոնք երբեմն գոյութիւն ունեցած եւ անհետա-
ցած կենդանիներու տեսակներ էին: Սաղմաբանութիւնը իր
փայլուն եւ անսպասելի կերպով համոզիչ ցուցմունքներով
կը հաստատէր այն զուգորդութեան օրէնքը որ կը յայտ-
նուի անհատին ու տեսակին մէջ:

Այսպէս ձեւաչըջումի վարդապետութիւնը մեթոտի մը
յանդեցաւ, ու անոր օգտակարութիւնները բազմաթիւ են,
այսինքն տեսակները չեն ծագիր մէկէնիմէկ, այլ իրարմէ
կը սերին, — ինչ որ կը ջնջէ կենսականութեան հրաշքը, —
գիտութեամբ բացատրելի օրէնքի մը համաձայն: Կեանքը
հանելուկ մը կը դառնայ, որուն լուծումը մարդկային
մտքի սահմաններուն մէջ կը գտնուի:

Դարձեալ, խնդիրը կը ձիւղաւորուի եւ հետեւաբար կ'որոշանայ: Ձեւաշրջումը բաժանելով կազմաբանական տարբերութիւնները՝ աարբերու երկար շարքի մը մէջ, տեսակ մը խոշորացում կուտայ այն անմիջական յարաբերութիւններուն, որոնցմով կենդանական էակները իրարու կապուած են եւ որոնց կնճռոտութիւնը, երեւոյթներու անհունութեան մէջ, զանոնք խիստ աննշմարելի կը դարձընէ տեսողութեան: Այնպէս որ տեսակի մը կազմաբանական յաւկանիչը բացատրելու համար պէտք է նախ անոր ծագումը փնտռել, այն հին ձեւերը որոնցմէ անցած է. յետոյ բացատրել այդ ձեւերը, նկատի առնելով մէկ կողմէ այն միջավայրը, ուր տեսակը ապրած է եւ միւս կողմէ անոր պէտքերը եւ կազմուածքը: Յաջորդաբար բարդ գործարանաւորութիւնները կը պարզանան այնպէս որ մարդ վերջապէս կը հասնի ամենատարրական կեանքին, որուն համադրութիւնը բնական գիտութիւններու սահմանը կը թեւակոխէ:

Այսպիսի հոյակապ սկզբունքներով յղացուած Ձեւաշրջումի վարդապետութիւնը սերեմն, ոչ միայն ժամանակակից գիտութեան երեւան բերած ամենէ գեղեցիկ օրէնքներուն մէկն է, այլ եւ ուսումնասիրութեան մեթոտ մըն է ինչ որ, ամեն բանէ առաջ, բացարձակապէս հարկաւոր է կենսաբանութեան, եւ ապագայ նորանոր գիւտերու:

Ո Գ Ե Լ Ի Յ Ը Մ Պ Ե Լ Ի Ն Ե Ր

Ոգելից ըմպելիները, կամ առհասարակ ալքօլ կոչուած հեղուկները երկար դարեր կան որ մարդոց սննդառութեան մէջ բաժին մը ստացած են: Այս իրողութիւնը գուցէ պահ մը ենթադրել տար թէ ալքօլը անհրաժեշտ պէտք մը ըլլար մարդուն գործարանաւորութեան, ինչ որ են կերակուրները, եթէ չափաւոր գործածութեան աննշան օգտակարութիւնը կեանքի պահպանումին մէջ կարեւոր տեղ մը բռնէր: Միւս կողմանէ դիտուած է որ բնաւ ալքօլ չգործածող մարդիկ, եթէ ոչ աւելի կատարեալ, բայց միշտ համահասար առողջութիւն մը ունեցած են, ինչպէս ըմպելի չափաւորապէս գործածողները:

Բայց դեռ աւելի կայ: Անդրիտական ապահովագրական ընկերութիւններու վիճակագրութիւնները ցոյց տուած են որ ալքօլէ հեռի փախողները աւելի երկար կեանք մը ունեցած են՝ քան ալքօլամոլները: Պ. Շէյմս Վիթ մասնաւորապէս երկարա՛իջցութեան այս պարագան վեր հանած է միջազգային համաժողովի մը մէջ, որ ասկէ քանի մը տարիներ առաջ գումարուած էր Պրիւքսէլ:

Շարք մը իրողութիւններ պարզօրէն կ'ապացուցանեն՝ ալքօլի ազդեցութեան տակ կեանքի քայքայումը Միացեալ Թագաւորութեան մէջ: Ռէչայպիթ կոչուած ընկերու-

թեան, — որ բաղկացած է միմիայն ալքօլ բնաւ չդործածող-
 ներէ եւ որ 1896ի վերջը՝ 142 000 չափահաս եւ 76 000 եւ-
 րիտասարդ անդամներ ունէր, — վիճակադրական ցուցակ-
 ները ցոյց կուտան որ տասնութ տարեկան անդամներու
 կեանքին տեւողութիւնը միջին հաշուով 8 $\frac{3}{4}$ տարիներ
 աւելի է քան իրենց հասակակիցներունը: Ուրեմն, ալքօ-
 լի զէմ այս բացարձակ ժուժկալութիւնը անոնց աւելի եր-
 կար կեանք մը կ'ապահովէ, ինչ որ չպիտի յաջողէին իրա-
 գործել, ուրիշ մարդոց ի նպաստ, բժշկութեան, առողջապա-
 հութեան, չափաւորութեան, մաքրութեան եւ մէկ խօս-
 քով վերջին վաթսուն տարիներու մէջ գիտութեան ձեռք
 բերած բոլոր օգտակար ծանօթութիւնները: Դարձեալ այդ
 վիճակագրութենէն կը հետեւի որ 1838էն 1854 տարինե-
 րու մէջ կեանքի միջինը, արու զաւակներու համար,
 39, 91 ըլլալ կանխատեսուած է. իսկ 1871էն 1880 ծնածնե-
 րունը 41, 35 եւ 1881էն 1890 ծնածներունը 43, 66 տարի-
 ներ: Այնպէս որ կէս դարու ընթացքի մը մէջ մանչերու
 կեանքի տեւողութեան միջին տարիքին վրայ երեք $\frac{3}{4}$
 տարիներ աւելցած պիտի ըլլային: Ասիկա կ'ապացուցա-
 նէ որ այսօր արու զաւակները ծնելով երեք $\frac{3}{4}$ տարի ա-
 ւելի ապրելու հաւանակութիւնը ունին՝ քան թէ անոնք
 որ ծնած են 1838էն 1854: Ինչ որ անհերքելի է այն է որ
 այժմ Անգլիայի չափահաս մարդիկը իրենց կեանքը կը հա-
 մառօտեն, կանուխէն իւրացուցած ալքօլամով սովորու-
 թիւններով:

Ո՞ւր են ալքօլի օգտակարութիւնները, — ցուրտին
 զէ՞մ:

Ցուրտ երկիրներ ճամրորդօղներ միաձայնութեամբ
 յայտնած են ալքօլի աննպաստ ազդեցութիւնը բնութեան
 այդ խստութեան զէմ. ու անոր առաջ բերած գրգռումը
 անմիջականաւ վտանգաւոր անկում մը կ'արտադրէ: Ջուրի
 մէջ երկար ժամեր մնացողները, լեռներու մէջ ճամբայ ցոյց
 տողները միեւնոյն բողոքը կարգացած են ալքօլի գոր-
 ծածութեան զէմ: Նմանապէս ֆիզիքական աշխատութիւն-
 ներու մէջ, ուր մանաւանդ գնդերային խոշոր ոյժերու

սպառուժ մը հարկաւոր է, լաւագոյն է ալքօլէ հեռու մը նալը :

Յոգնութեան պահուն սակայն, 20-30 կրամ ալքօլ, սննդարար կերակուրի մը հետ կը թուի օգտակար ըլլալ :

Մտաւորական աշխատութիւններու վրայ ալքօլի ճշմարիտ ազդեցութիւնը ամբողջովին որոշել զժուարին է : Ներելի է ըսել որ ընդհանրապէս ալքօլը կը գրգռէ երեւակայութիւնը եւ կարծես կ'աւելցնէ խորհելու արագութիւնը : Կարելի է աւելցնել նաեւ որ ուղեղային մեծ յոգնութիւնէ մը վերջ ալքօլը սանկ անոր ոյժերը վերանորոգելու կը սատարէ, սակայն ինչ որ ճշմարիտ է, երբ արամաբանութեան, հաշիւի, դատողութեան շուրջը կը դառնայ խնդիրը ալքօլէ խոյս տալը չափազանց նախամեծարելի է :

Ալքօլը քոյն մ'է : Անոր մեծաքանակ եւ յարստեւ գործածութիւնը առողջութիւնը կը խանգարէ, առաջ ընկնելով գործարանաւորութեան մէջ կարգ մը հիւանդագին երեւոյթներ : Բացառիկ գինովութիւնը, որ չափազանց ալքօլի ծծումբէ մը կը ծագի, որ եւ է հեռք չի թողուր գործարանաւորութեան վրայ, բայց շարունակական գործածում մը անգարմանելիօրէն կը քայքայէ ինչպէս մարմինը նոյնպէս բարոյականը :

Ալքօլամոլի մը ձեռքերը կը դուան, ստամոքսը գէշ կը մօտէ, սխորթակը միշտ գոցում է, լեարգը կը հիւանդանայ :

Բարոյական տեսակէտով՝ մտաւոր կարողութիւնները կը տկարանան եւ ատոր հետեւանք, յաճախ յիմարութիւն կը պատահի : Այս ատիճանաւոր վատթարացումը, ոչ նուազ անպաշտօններ, կը վերջանայ անձնատպանութեամբ, ու այլապէս չմտնելի ազդեցութիւնը կը տարածուի մինչեւ ալքօլամոլին սպազայ սերունդներուն վրայ, որոնք ջղային դառնալուն տկարութիւններով կը շարժարուին :

Գինին եւ գարեջուրը երբ անարատ են, իրենց քիչ ալքոլ պարունակելուն պատճառով, այնքան վնասակար չեն, որքան ճշմարիտ օղիները, որոնց պարունակած ալքոլի քանակութիւնը խիստ մեծ է:

Ճրանսայի մէջ գործածուած ալքոլի քանակութիւնը որ քան զօր կ'աւելնայ՝ այն օրէն ի վեր երբ ալքոլի ճարտարագործութիւնը կը զարգանայ եւ անոր գինը կը սկսարանայ: Սակայն այս սպառումի չափազանցուիլը անհետեւանք չ'մտայ: 1860ին 100 յիմարի վրայ 8-9ը ալքոլական էին եւ 1885ին այդ թիւը բարձրացած էր 16 առ 100: Դիպուածական մահերու մէջ ալքոլը խոշոր բաժին մը իրեն պահած է, 1885 թուականին 500-550 այդ օրինակ մահ հաշուած է. Դարձեալ՝ ալքոլի ազդեցութեան տակ անձնասպաններու թիւը կը հասնի 11էն 12 առ 100: Միւս կողմանէ գիտուած է որ այն նահանգներու մէջ, ուր ալքոլի գործածութիւնը մեծ է՝ ոճրագործութիւնները անանհամեմատօրէն բազմացած են:

Այնպէս որ եթէ ալքոլը երբէք գոյութիւն չունենար մարդկութեան մեծ բարիք մը եղած պիտի ըլլար:

Փարիզ

ՆՇԱՆ

ԳԻՐՔԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

* ՆՈՐ ԲԱՌԳԻՐԲ (պատկերազարդ) ՖՐԱՆՍԱՀԱՅ :
Հաստր Առաջին, A-H, 1060 էջ, Գին 25 ֆրանք : Դի-
մել Լեդինակին, Իշ. Գ. Լուսինեանի — 108, Avenue de
Neuilly - Paris :

* ՈՐՔՈՒՆԻ (Բացառիկ պատկերազարդ թիւ «Բազմա-
վէպ» Հանդիսարանի) : Գին 2 ֆր. 50 ս. : Դիմել Բազմա-
վէպի խմբագրութեան. — Venise, St-Lazare (Italie) :

* ՔԵՐԱԿԱՆ—ԸՆԹԵՐՑԱՐԱՆ (պատկերազարդ) : Աշխա-
տասիրեց Միսիսար Պոնսացի : Հրատ. Պալենց գրատան, Կ.
Պօլիս : Գին 5 ղուռուշ :

* ԽԱՐԱԶԱՆ : Գրեց Սուրեն Պարթևեան : Տպագրու-
թիւն «Համալսարան»ի : Գին 1 ֆրանք : Դիմել Լեդինա-
կին, 137, Bd. St Michel - Paris :

ԿՈՉՆԱԿ. — Շարաթաթերթ : Հրատարակուիլ սկսած
է Ամերիկա : Տարեկան 1.50 տօլար : Հասցէ Gotchnag Pub-
lishing Company, N° 14 Bacon Str. Boston, Mass.

* ԳՈՒԹԱՆ. — Հանդէս Ամսեայ (Հողագործական, Գի-
տական եւ Արուեստական) : Իւրաքանչիւր թիւը 16 էջ :
Տարեկին 12 ֆր : Տնօրէն Գ. Մեծասուրեան. — 23, rue
Collégiale, - Paris :

Նոր Բազմիթ Ծրանաանայ. — Այս բազմիթքը՝ առաջին
հատորէն դասելով, մեր մէջ ցարդ գոյութիւն ունեցածնե-
րուն աճինէ ճօխն ըլլալու երեւոյթը ունի : Ինչպէս կ'ե-
րեւի, Իշ. Լուսինեան ջանադիր եղած է իր այս բազմիթ-
քին մէջ միացնել անխօսքար այնքան աշխարհիկ եւ գոր-
ծածական բառերը որքան գիտականները, իր երկա-

սիրութեան գործնական (pratique) առաւելութիւն մը տալու համար: Իր այս բաղձինքին մէջ բառագիրը գրեթէ յաջողած է. սակայն խիստ վիճելի է տակաւին թէ արդեօք ցարդ եղած փորձերը բաւական էին ատանկ ձեռնարկի մը բաղձացեալ ճշտութիւնը տալու համար:

Հայ լեզուն Ֆրանսական գործածական եւ աշխարհիկ բառերու վրայ երկար ատեն ծեծքած է. բաւական ձեռնհաս եւ հմուտ գրագէտներ ունեցած ենք այդ վերլուծումի գրուարին գործը ձիգ տարիներ քրքրելու, եւ ապահովաբար Ֆրանսական այդ ճամբով բառարան մը, տքնութեան այդքան տարիներէն վերջ, կրնար գոյութեան մը իրաւունքը վայելել. բայց թէ գիտական տիպար բառարան մը, այդ պայմաններու մէջ, որքան կրնայ յաջողի՝ չափազանց տարակուսելի է:

Խոստովանինք որ չենք ունեցած ցարդ հեղինակութիւն ունեցող գիտնականներ, միեւնոյն ատեն հմուտ հայ լեզուին, որ զբաղած ըլլան մեր գիտական բառերով: Դարձեալ, այդ տեսակ աշխատութիւն մը մեր մէջ, ամուլ պիտի մնար. որովհետեւ ունինք եւ ունեցած ենք գրականութիւն մը, բայց ո՛չ երբէք ազգային գիտութիւն մը, որ միայն իրաւունք պիտի տար մեզի ազգայնացնել ձեռք մը որ համաշխարհային ծագում մը ունի եւ երբէք հայկական:

Իշ. Լուսինեանի նոր Բառգիրքը՝ գիտական տեսակետով մեծապէս մեղանշած է այսքան պարզ ճշմարտութեան մը դէմ, բաւական համարելով մասնակի ջանքերը ընդհանրացումի այս կնճռոտ եւ վիճելի հարցին մէջ: Գիտական բառերու ճոխութիւնը այն աստիճան հակիրճութեան մղած է բառգիրքը, որ այս վերջինը չոր ու ցամաք կերպարանք մը ստացած է, ու յաճախ բառախոյզը կը փորձուի կարծել հայ նշանակութեան մը առջեւ, թէ կը գտնուի ֆրանսերէնէ աւելի կնճռոտ բառի մը ներկայութեան:

Թողով մեր մասնագէտ աշխատակցին, Պ. Ս. -ին, այս նիւթին վրայ ըլլուելիք մանրակրկիտ քննադատութիւնը, զոր խոստացած է գրել, աւելցնենք որ Իշ. Լուսինեանի

բառգիրքը եթէ գիտական տեսակէտով գործնական օգտակարութիւն մը չի ներկայացներ, շահեկան ըլլալէ չի դադրիր անով որ պիտի կրնայ ապագայ լաւագոյն գործի(?) մը նախաշաւիղը ըլլալ, ու այսպէս իրականացած պիտի ըլլայ ծերունի Բառագիրքին սա իշխանական դոյզն(?) բաղձանքը. «Սոյն երկասիրութիւնն պատրաստած ժամանակս, իմ փափաքն եւ միակ մտածութիւնն եղած են՝ օգտակար լինի Ազգիս եւ Հայրենակցացս: Եթէ յաջողեցայ սոյն դժուարին ձեռնարկին մէջ, ա՛յս պիտի լինի իմ վարձատրութիւնն եւ փառքն»:

Մանաւանդ փառքն: . . . !

Որդունի (Օգնութիւն հայ որբերու). — «Բազմավէպ»ի այս պատկերազարդ բացառիկ թիւը, ինչպէս իր անունը ցոյց կուտայ, հայ որբիկներու ի նպաստ հրատարակուած է: Հայ թերթերը ժամանակին խօսեցան անոր վրայ, ու ոմանք ալ քննադատեցին՝ մինչեւ իսկ կծու բառերով՝ անոր պարունակութեան յախուռն ընտրութիւնը: Մենք այդ կէտին վրայ չգիտի վերադառնանք, որովհետեւ ատ երկրորդական նշանակութիւն ունեցող պարագայ մ'է, ամեն բանէ առաջ: Ինչ որ կ'ուզենք մասնանիշ ընել այդ հրատարակութեան ասիթով, այն է վեհտիկեան Հայրերու սթափած վիճակը:

Այլեւս անոնք չեն ուզեր Միաբանութեան մը յատուկ ամփոփուած վիճակին մէջ մնալ, ու ըմբռնած են, — կը յուսանք եւ կը ցանկանք բոլոր սրտով, — թէ իրենց դերը ժամանակին հետ փոխուելու է եւ փոխած են: Առաջին անգամն ըլլայ թերեւս որ մարդկութեան իտէալ զգացումի, ընդհանուր եղբայրութեան եւ վերջապէս համաշխարհային ճանչցուած պարտականութիւններու վեհ զազափարը կը յաղթանակէ աշանդական եւ պաշտամունքի մոլեռանդութեան, — որուն զարը բնականաբար այլեւս անցած է — եւ կը թելադրէ Միութարեան Հայրերը անկարգի նիւթուպէս վերականգնումի նուիրական գործին, սուանց խտրու-

Թեան կրօնքի եւ դաւանանքի :

Ահա այս պարագան մեզի համար նշանակալից է եւ քնականաբար զմայլելի :

Երբէք չենք մտածած թէ Մխիթարեան Հայրերու ցարդ բռնած ուղղութիւնը անորակելի ըլլայ : Անոնք հայ մշտքին եւ մտաւորականութեան կարապետներն եղած են միշտ ուրիշ խնդիր է թէ իրենց այդ ճամբուն մէջ բռնած մեթոտը այնքան սխալեցի՞ք չէ եղած : Կրնանք մեթոտի մը թեւրութիւնները ձախկել, բայց երբէք զայն ուրանալ :

«Որբունի»ն անտարակոյս սկզբնաւորութիւն մ'է, եւ գեղեցիկ սկզբնաւորութիւն մը, ժամանակայարմար գործունէութեան մը զոր կորովով, — քանի որ միջոցները բնաւ չեն պակսիր, մտաւոր թէ նիւթական —, առաջ պիտի վարեն Մխիթարեան Հայրերու նոր յաջորդները :

Հայ ժողովրդին սրտին խօսելու համար՝ Մխիթարեան Հայրերը այլ եւս փնտռելու չեն յաջողութեան գաղանիքը տքնաջան մտաւոր վաստակումներու մէջ, որովհետեւ կըրնան իրենց ըմբռնումները չափաւորել, բայց երբէք փոխել, ու ասիկա բռնադատուած :

Ուրիշ առիթի մը ձգելով մանրամասն խօսիլ թէ՛ ի՞նչ պէս կրնան մեր Միաբանութիւնները զարկ տալ մեր ազգի մտաւոր զարգացումին, կը գոհանանք առ այժմ այս հարեանցի ակնարկներով :

«Որբունի»ն չափազանց ամանագին է, Չ եւ կէս ֆր : Կ'արժէ որ ամեն մարդ զայն ունենայ. նոյն խակ անանք, որ «Որբ»ին գթալու զգացումը չունին, բայց ունին գեղեցիկ հրատարակութիւններ ունենալու հետաքրքրութիւնը, կրնան զայն գնել եւ գոհ մնալ :

Քերական—Նկրեղարան . — Մեր մանկավարժական հրատարակութիւններու մէջ առաջին տեղ մը բռնելու է պըղ-ախկներով զբաղող եւ անոնց օգտին նուիրուած այս գըրքոյիը :

Նորագոյն եւրոպական եւ մանաւանդ գերմանական

մեթոսներու վրայ պատրաստուած է Գերական—Ընթերցարանը: Գծել, հնչել, գրել, կարդալ ահա այն մեթոսը որուն Պ. Պոնտացի հետեւած է իր գործը պատրաստելու համար: Որքան մեթոս մը կատարելագործուած է, այնքան զայն կերարկելը հմտութիւն եւ խնամք կը պահանջէ: Առաջին ակնարկով այդ հանգամանքը նկատեցինք, որովհետեւ մեթոսի, ուսուցման գեղեցիկ ծրագիրներու պակասէն առաջ մեր ազգ. վարժարաններու մէջ կը պակսին ժըշաջան եւ իրենց պաշտօնին բարձրութեան գիտակ ուսուցիչներ: Իրաւունք ո՞ւնինք մտածելու թէ բարի տրամագրութիւն մը գոնէ չի պակսիր մեր բարոյրեցիտ վարժապետներուն՝ կրթութեան այս մեծ չարիքը մեղմացնելու ջանադիր ըլլալ, փափաքելով օգտուիլ մանկավարժական գեղեցիկ հրատարակութիւններէ, որոնցմէ մէկն է անկասկած այս Գերական—Ընթերցարանը:

Գերականին մէջ տղան կը սկսի պարզ գիծեր քաշելով, որոնք պիտի առաջնորդեն զայն՝ կազմել նախ ամենապարզ ձևով տառեր, յետոյ բարդեր: Իր կազմած տառերը հետզհետէ ձայներու պիտի փոխուին եւ այս վերջինները շունչ պիտի ստանան ու անուններ, գաղափարներ պիտի յայտնեն: Այսպէս, —իւրաքանչիւր տառի արտադրած բառին պատկերը միեւնոյն ատեն աչքին առջեւ—, տղան կը հասնի կարճ խօսքեր գրել ու կարգալ բնական կերպով:

«Ընթերցարան»ի մասը առաջին գլուխ տնի Դպրոցը (հոն գտնուող առարկաները, գիրք, գրիչ. աշակերտներու պարտականութիւնները եւն.), յետոյ Տնը, ու անոնցմէ թեկադրուած՝ գրուած են ոտանաւոր եւ արձակ մասչելի ընթերցանութիւններ, որոնց ուսուցանելու եղանակը Պ. Մ. Պոնտացի կը բացատրէ մանրամասն կերպով իր յոռաջարանին մէջ: Վերջ ի վերջոյ տարիին չորս եղանակները իբր ընթերցանութեան նիւթ կը ներկայանան եւ զբոյժը կը վերջանայ զպրոցական եւ ուրիշ պարզ առարկաներու շեմարթի գծերով պատրաստուած պատկերներով: Չմոռնանք ըսել որ ամեն ընթերցանութեան նիւթ իր մասնաւոր պատ-

կերը ունի, ուր կ'երեւան անոր պատմութեան տեսարանս ները, եւայլն :

Պատկերները ճոխ են եւ պատրաստուած խնամքով : Ձեռագիր օրինակներն ալ պարզ են եւ մաքուր : Յիշենք հոս որ ատոնց կաղապարները պատրաստած է, բնիկ ամասիացի երիտասարդ մը, Պ. Հ. Մանիսաճեան, որ փորագրութիւն կը սովորի Փրանկֆուրտի մէջ եւ ինչպէս կ'իմանանք նախանձեղի յաջողութիւններ ունեցած է արդէն իր աշակերտական շրջանի պահուն :

Դիտողութիւն Պ. Հեղինակին :— Այս օրինակ գործերու մէջ կարեւոր պարագայ մ'է նաեւ լեզուի խնդիրը : Ընթերցարանի մասին մէջ գործածուած աշխարհաբար ընթացիկ լեզուն երբեմն խիստ տգեղ խորթութիւններով կը ներկայանայ. — յիշենք օրինակ մը. (էջ 120) «Սաթինիկ անգամ մը իր հօրը հետ անտառի մը մէջէն կ'անցնէր : Անի հոն թուփի մը տակ սունկ մը տեսաւ : Անիկա հովանոցի կը նմանէր. երկայն կոթ մը ունէր ու կոթին վրայ գլխարկ մը կար : Կոթը ճերմակ, բայց գլխարկը թխագոյն էր :» — «մը»երու, «կոթ»երու, «անի» եւ «անիկա»ի այս քանի մը սողերու լափերին թոսէն խոյս տալու համար հետեւեալ պարզ պարբերութիւնը կարելի էր դնել. «Սաթինիկ երբ իր հօր հետ անտառէն կ'անցնէր, թուփի մը տակ նշմարեց սունկ մը որ հովանոցի կը նմանէր. սունկը ունէր ճերմակ կոթ մը եւ անոր վրայ ալ թխագոյն գլխարկ մը :»

Այս օրինակ փոքրիկ թերութիւններ որ գործին արժանիքը երբէք չեն նուաստացներ՝ անտարակոյս կ'ուզուին երկրորդ տպագրութեան մէջ. ու դարձեալ նկատի կ'առնուի այդ պահուն գրքին զինը 5 ղուսուշ, որ չափազանց սուղ է Գերական — Ընթերցարանի մը համար մանաւանդ :

Խորագրան. — Պ. Սուրէն Պարթեւեան, իր այս գըրքով կը ներկայանայ ընթերցողին իր ամբողջ հոգեբանութեամբը զոր պիտի ջանանք վերլուծել իր բոլոր հե-

սաքրքիր կողմերովը :

Իրքոյկին յառաջաբանը, «Գիտցա՛ճ ըլլան», մոլեգնորէն կոռուղի մը ինքնալստան եւ եսասէր տիպարը կ'արտացոլէ Պ. Պարթեւեանի մէջ. տիպար մը, որ ինքնաճանաչութեան համեստութիւնը կ'ոտնահարէ ու ինքզինք կը հոչակէ, սակ փառօն, հայ հրապարակագրութեան եւ կեանքի ամեն կեղտոտ ներկայացուցիչներու անվերապահ խարազանողը : Տխուր պաշտօն մը, որուն թեկնածու կը ներկայանան առաւել կամ նուազ փայլուն ֆրագներու նախապատրաստութեամբ զժբողգաբար խիստ շատեր . . . :

«Խարազան»ին առաջին մասը, «Դիակի մը Շուրջը», բաւականէն աւելի հետաքրքիր է : Պ. Պարթեւեան մէկ կողմէ «ճանճ մը» — Զօպանեան Ա. — ճզմելու այգանական մտածումէն թուրցած, միւս կողմէ իր սոսկական անձի զէմ եղած հենինիւստիօններու («Անահիտ»)ի մէջ) նենդութենէն վերաւորուած, որ իր «ներողամիտ կամէութիւնը անկարելի կ'ընէ», — կ'որոշէ վերջապէս «անհրաժեշտ բացատրութեամբ մը շատանալ» :

— Ու այդ բացատրութիւնը կը լեցնէ ամբողջ 52 էջեր, ուր կարգ առ կարգ կը պատմուին անուղղամիտ Ա. Ա. ի մը Զօպանեան Ա. ի նուիրուած բոլոր նպատակաւոր փառաւորումներու շարժառիթները, որոնք կեղծիքը կ'անձնաւորեն, բռնագրօսիկ բարեկամութիւն մը կը վերանորոգեն եւ վերջապէս խարխուղ գոյութիւններ ամբապնդելու կը ձգտին : — Յետոյ Զօպանեան Ա. ի գրականութիւնը կը քննադատուի (Պրօշիւրի ամենէ կարեւոր մասը բնականաբար) եւ վերջապէս կը խօսուի կարգ մը ուսանողներու (Ուսանողական Միութիւն անունին սակ) Բաշալեան Կեւոնի ի պատիւ սարքած երկկոյթին վրայ : —

Պ. Պարթեւեան, որ զոճացած էր ուսանողաց երկկոյթին՝ իր կարգացած ճառին մէջ քանի մը ակնարկներով, — ինչ որ Զօպանեանի քինախնդիր վրէժխնդրութեան առիթ տուաւ յետոյ, — «Խարազան»ին առաջին մասը գրեթէ ամբողջ այդ Պարոնի գրականութեան քննադատութեան կը նուիրէ ու զսյն, «Դիակը», անդամոտանելէ վերջ անոր

Թաղումը կը կատարէ ու գերեզմանը կը խաչակնքէ, . . . զի յարեցէ յաւուրն վերջին :

Կ'անուանէ Չօպանեանը՝ մեր «անորակելի գրականութեան» շրջանին, որ «չփոթ ու անհարազատ արտադրութիւններու խառնակոյտ մը կը կազմէր», ամենէ փայլուն ներկայացուցիչը, գործածելով «յանկարծակիի բերելու ու միամիտները հիացումի ստիպելու լիբը ու վերջապէս գիւրին եղանակը» : «Ամբողջ գրական սերունդ մը — Պօլիսէն մինչեւ գաւառներուն խորը — փճացուցած էր Ա. Չօպանեանի սխալ ու սուտ գրականութիւնը : Դեռ մինչեւ այսօր Պօլսոյ պարբերականն ու առօրեայ հրատատակութիւնները յորդառատօրէն կը հաստատեն ասիկա :» Ու այդ պարունին գրականութեան «գարտակութիւնը» կը վերագրէ անոր «ի ծնէ որ եւ է մարդկային զգացում զգալու եւ զայն թարգմանելու դատապարտուած անկարողութեան» . . . Անկարող իր հաշուոյն ապրելու եւ զգալու՝ Ա. Չօպանեան գիրքերուն մէջ փնտռած է խարխափելով իրեն համար անծանօթ խորհուրդ մը մնացած բոլոր մարդկային զգացումներու բացատրութիւնը : . . . Եւ որովհետեւ գիրքերն ալ բաւական ու պէտք եղածին պէս չէ՝ կարդացած՝ կրցած չէ — հակառակ ասոր համար մեզ համոզելու իր խելայեղ ջանքերուն — «մտաւորական» մը, «սէռէպոլ» մը ըլլալ ու հարկաւորաբար իմաստակ մը եղած է . . . »

Յայտնութիւններու շարքով մը, միեւնոյն ատեն, կը բացատրէ Պ. Պարթեւեան՝ թէ ի՞նչպէս Չօպանեան եւ բարեկամներ կեղծ ու պատիր աստուածացումներով զիրար կը շահասիրեն եւ կը շահագործեն :

Երկրորդ մասին մէջ, — «Բաշայիտան Երեկոյթը» — Պ. Պարթեւեան նախ քանի մը բացատրութիւններ կուտայ այն անձերու վրայ, որոնք Չօպանեանէ գրագէտներ (որչա՞փ ալ ասոնց թիւը խոշոր է) ճանչցուած են, եւ որոնք Պ. Պարթեւեանի ճառին մէջ անտես առնուած էին : Ու Յ. Շահնազարը կ'անուանէ « . . . ռաքի փաստաբան մը, որ օրին մէկը խելացի գաղափարը ունեցաւ իր խնայողութիւնները գործածելու թերթի հիմնարկումին . . . », Ե. Օսեանը

«իր քիթին չափ մեծ «Մ»ով Միջակ մը»: Կեայլն:

Իի ճառին մէջ վերջին տասը տարուան գրականութիւնը երեք շրջաններու կը բաժնէ, 1. Հռետորական, 2. Իրապաշտ եւ 3. Անորակելի: Կը խօսի մասնաւորապէս Իրապաշտ շրջանին վրայ, որուն երեք հզօրագոյն դէմքերը կը ներկայացնեն Բաշալեան, Զօհրապ եւ Հրանդ: Ու ահա այդ շրջանին կողքին ծաղկեցաւ անորակելի գրականութեան շրջանը՝ որուն վրայ քիչ մը վերը խօսուած է արդէն:

Թէ որքան արժէք ունին Պ. Պարթեւեանի գրական նպաստաւոր վճիռները Լ. Բաշալեանի նկատմամբ, որովհետեւ ան եւն գրագեցն է, առիկա տարակուսելի է: Ու Ս. Պարթեւեան, որ տարօրինակ կը գտնէ Զօպանեան Ա. ին Մանուէլեանի մը մէջ Քլօտ Պէրնարներ տեսնելու խօլ երազանքը, նմանապէս Ա. Ա. ի մը Զօպանեանին ձօնած տիւզերական գրականութեան մը ծանօթութիւնը, իրեն թոյլ կուտայ հոչակելու թէ Բաշալեանի գրականութիւնը ունի «մարդկային նկարագիր», «տիեզերական ըմբռնումի խոհուն ու լայն բարդութիւն», «վերացումներու եւ դազափարականութեան հրապուրիչ ու թերագրական հակումներ» եւն. եւն. միշտ խոշոր բառեր, բայց միշտ բառեր! : Թո՛ղ ըլլայ Բաշալեան, մեր մէջ, բանիմաց գրագէտը. թո՛ղ ըլլայ անիկա լաւ աշխարհաբառ գրող մը, ճկուն ֆուզներ շինող մը — բայց երբեք չպիտի յաջողի ըլլալ տիեզերական ըմբռնումի գրագէտը. ու այս բանի մէջ անձը մեղաւոր չէ այլ պայմանը, միջոցի պակասը:

Այս ամենէն կը հետեւի որ Պ. Պարթեւեան իր անկեղծութեան խոյանքներուն մէջ չէ կրցած ասկուսին հասնիլ այն բարոյականին, որ պիտի ըմբռնէր հասուն եւ ճշմարիտ դատողութեան մը անսգիւտ կորովը: Ուղած է ատոր ձգտիլ, ու, հակառակ իր պայթող պարբերութիւններու ընձեռումին, չէ կրցած ինքզինքը պէտք եղած պարզութեամբ ներկայացնել: Խորտակած է, փշրած է ամեն բան

ի միաս իրեն, իր շահերուն, խոստովանենք զայդ, բայց իր վերապահումները դէպի Ա. Ա. ը՛ մեզի թոյլ կուտան մտածել թէ բաւականէն աւելի երկդեմի կ'երեւայ իր անկեղծօրէն խարազանելու սկզբունքը տարակուսանքի մէջ ձգելու համար :

Գրական քննադատութիւն մը ընել «Խարազան»ին վերայ երկար պիտի ըլլար. սա չափը ըսենք որ Պ. Պարթեւեան օժտուած է լաւագոյն գրող մը ըլլալու ձիրքերով : «Խարազան»ին մէջ, իր գրելու եղանակը չափազանց անհական է, ու իր ոճը աւելի սահուն պիտի ըլլար, եթէ խոյս տար երկար ֆռազներէ եւ միեւնոյն բառերու յաճախ կրկնութիւններէ :

Գութան. — Պ. Գարեգին Մեծատուրեան, որուն քանի մը յօդուածները տեսան մեր ընթերցողները «Համալսարան»ի էջերուն մէջ, այդ հանդէսին տնօրէնն է, ինչպէս նաեւ հրատարակիչը :

Գութանին 1 թիւը ձեռքի տակ ունինք, 16 միջադիր էջերով, ուր տպագրուած յօդուածներու լուրջ վերլուծում մը ցոյց պիտի տայ անոր իրական արժէքը :

Առաջնորդող յօդուածին մէջ «Գութան»ը, իր ծրագիրն ու ուղղութիւնը կը ջանայ պարզել : Ճապաղ լիզուով եւ առանց մեթոտի գրութիւն մ'է ատ. ու երբեմն անհասկանալի եւ միշտ կրկնուած նախադասութիւններու մէջ ընթերցողը կը հանդիպի պարզամիտ բաղձանքներու, — «կը հաստանք որ «Գութանը ընդունելութիւն եւ համակրութիւն գտնէ մեր բոլոր ժողովրդի խաւերէն...» : Վիչ մը վարը «Շրանի թէ՛ «Գութան»ը մեր հողագործներու եւ արուեստաւորներու ձեռքն անցնէր...» : Աւելի վարը. «Կստահ ենք որ մեր ուսուցիչները պիտի համակրին «Գութան»ին...» : Յետոյ «Որքան ուրախ պիտի ըլլանք եթէ «Գութան»ը եւայլն» — անորակելի կոյտի մը :

Գերմարդկային ճիգով մը «Գութան»ի խմբագիրը կսակածոտ կարծես իր թերթին գոյութեան մը իրաւունքն

ուսննալուսն, մոռցած է հակիրճ եւ յստակ գիտական լի-
զու մը գործածել, —հակառակ իր համոզումին—, եւ աջ ու
ձախ սլաքներ արձակելով կ'ուզէ գոյութիւն ունեցող հան-
դէսներու քոլիկը անոր տեղ մը ապահովել նախ: Ուրեմն
այլ եւս զարմանալի չէ կարգալ հոն խօսքեր, զոր արտա-
սանել ներելի չէ անուշով իսկ մասնագիտութիւն մը եւ-
թաղերէլ տուող հանգէսի մը, ինչպէս «Գուրանը չպիտի
զբաղի քաղաքական հարցերով, կրօնաւորան խնդիրներով,
եւն, եւն»:

Երկրորդ յօդուածը ֆրանսերէն նամակ մ'է, գրուած
Պ. Տիւքլօէն՝ Պ. Գ. Մեծատուրեանի, որով էնսթիւթիւ
Բասթօռի մեծանուն Տնօրէնը, կը պատասխանէ քաղա-
քաւար լեզուով մը իրեն ուղղուած նամակի մը. եւ կ'ակ-
նարկէ որ անոր Խմբագիրին դէպի գործը ուսննալիք ճըշ-
մարիտ գիտակցութիւնը միայն պիտի կրնայ «Գութան»ին
օգտաշատ ուղղութիւն մը տալ:

Երրորդ յօդուածին մէջ, որուն նիւթն է «Հողը», Պ.
Գ. Մեծատուրեան խիստ համառօտ եւ սովորական ծանօ-
թութիւններ կուտայ վարելահողին վրայ, որուն տարբա-
կան քաղաքութիւնը դպրոցականները առաջինն ըլլալով
կը սորվին, երբ անոնց երկրագործական ծանօթութիւն-
ներ տալ կ'ուզուի: Անշուշտ Պ. Մեծատուրեան հայ հողա-
գործին իրր անձանօթ տեղեկութիւններ երեւակայելով
ստորագրած է այդ չափազանց Լամեստ սողերը:

Չորրորդ գրութիւնը, «Հողագործական Արձագանք»,
քանի մը ժողովրդական գիտելիքներու ամփոփումն է:
1. Երկրաւայր: Հողաճճիին կամ Հողորդին, մշակին մա-
տուցած ծառայութիւնը կը բացատրէ, բան մը որուն վրայ
աւելի ձեռնհասօրէն եւ հակիրճ կերպով գրուած է «Համալ-
սարան»ի առաջին թիւին մէջ: — 2. Կարճեսու եւ կարագս-
սու կոմիտը ճանչնալ: Որոնք պզտիկ գլուխ, բարակ ու փայ-
լուն եղջիւր, փոքր ուլուն, կակուղ մօրթ, առատ մաղ,
հաւատար ու իրարմէ հեղու եւ առաջ ծոած ծիծեր կ'ունե-
նան: Կարագ շատ ունեցողներու ծիծերը դեղին ու ազդր-
ներու մէջ բուսած մաղերը կարճ, խիտ եւ մետաքսանման

կ'ըլլան: — 3. Կովերու կաղերը, որ առաջ կուգայ կրային լուսածնատի (ֆոսֆատ տը շօ) անոնց ոսկորներուն մէջ պակսելէն:

«Արօրը» մակդիրով Ծրդ յօգուածը, Հալածեան ստորագրութեամբ, այդ գործիքին վրայ նախ պատմական տեսութիւն մը կ'ընէ, յետոյ անոր պաշտօնն ու կատարած աշխատութիւնները կը բացատրէ: Նորութիւն մը չի սուրեցնէր այս գրութիւնն ալ ու մասնաւոր շահեկանութենէ զուրկ է:

Յետոյ կուգայ «կնոջ եւ կովու կաթին» վրայ համառօտ բազդատական յօգուած մը: Եթէ կովի կաթին կաթնաշաքար եւ հաւկիթի գեղնուց խառնուի, որ կը պարունակէ լուսածին (ֆոսֆօր) եւ երկաթ, կնոջ կաթին պարունակած նիւթերը անոր մէջ գրեթէ կ'ամբողջանան եւ հետեւաբար ծծկեր մանուկին լաւ սնունդ մը կրնայ ըլլալ:

Վերջընթեր յօգուածը գինիին ու զայն մաքրելու միջոցներուն վրայ կը խօսի: Հաւկիթի ճերմկուցը, մածիտը (ժէլատին), արիւնը, ձկնառսինձը (քօլ) եւ կաթը գինին յստակող մարմիններ են:

«Գութան»ը կը վերջանայ եւրոպական սխստի վրայ կաղապարուած հողագործական ամսացոյցով մը, ուր տրուած տեղեկութիւնները թէ' մեր երկրին մէջ կիրարկելի են, խիստ կասկածելի է:

«Գութան»ը իր այս թիւով մեզի մեծ բան մը ոչ կուտայ եւ ոչ ալ կ'ըսէ: Իր ընտրած մեթոտով, մեր հողագործներու օգտակար ըլլալու համար որ եւ է արգիւնքի չպիտի հասնի: Հողագործին ծառայութիւն մը մատուցանելու համար պէտք է անոր իր հասկցած բառերով խօսիլ. «Գութան» ո'չ միայն այդ բառերը չի գործածեր այլեւ օտար լեզուով բառեր կը գնէ, այն ալ օտար տառերով գրուած: Phosphate de chaux, précipité, bisulfate de potasse, pseudo nucléine կ'ըսէ ու կը գոհանայ: Ենթադրելով պահ մը, որ ըսուածները ու գրուածները վերին շահեկանութիւն ալ ունենան, ամենէ առաջ պէտք պիտի ըլլար մեր գիւղացիին ֆրանսերէն սովրեցնել եւ յետոյ քիմիա՝ ա-

նոսնցմէ օգտուելու համար :

Պ. Գ. Մեծատուրեան միայն այն ասան կրնայ իր «երկար տարիներու ընթացքում մտածած ու ծրագրած համեստ իտէալի այս մարմնացումը»! բաղձալի բարձրութեան մը վրայ գնել, երբ իրեն աջակից փնտռէ հայ ձեռնհաս անձեր որ տիրացած ըլլան երկրագործական ճիւղի ինչպէս եւրոպական նոր գրութիւններուն նոյնպէս մեր երկրին հին եղանակներուն, — ասիկա անհրաժեշտ է բաղբառական հետազոտութիւններու եւ հետեւաբար ամանագին միջոցներով նոր սխտեմներու մեր մէջ ներմուծուելուն համար—, եւ որ հմուտ ըլլան հայ լեզուին ու գրտական ժողովրդական բառերուն՝ հողին վրայ գրուած յօդուածները մարտիկի դարձնելու համար :

Ֆրանսացի աշխատակիցներ ունենալ այնքան կարեւոր չէ որքան այս մեր ակնարկած պարագան : Ֆրանսացիին ֆրանսերէն կը մտածէ ու ֆրանսացիի պէս կը տեսնէ, արդէն զարգացած միաքերու ուռճացումը չէ որ հոս խնդրոյ առարկայ է, այլ զասակարգէ մը, հողագործէն, լաւ հասկընալի զառնալու կանխամտածութիւնը :

Իրա՛ւ է որ չպիտի պոտոնք Պ. Գ. Մեծատուրեանի երեսին (զինքը լեզուպատառ չընելու համար) թէ «հացի պատառ մը ճանկելու» համար կը հրատարակէ «Գութան»ը. բայց իր «համեստ իտէալը մարմնացնելէ» առաջ երկու անգամ (չպիտի ըսենք անգամ մը) չմտածեց արդե՞ք երբ այդքան փոքրածաւալ թերթի մը 12 ֆրանք գին նշանակեց : կը կասկած ինք. . . :

* * *

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԵՒ ԻՐ ԵՐԿՐՈՐԻ ՇՐՋԱՆԸ

Մեր ընկերին, Պ. Շաւառչի, հիւանդութիւնը ու մահը արգելք եղան որ «Համալսարան» իր ժամանակին լոյս տեսնէր : Մեր ընթերցողներուն եւ համակիրներուն կը ծանուցանենք որ այդ ողբալի ծանր կորուստը որ եւ է հետեւանք չպիտի ունենայ մեր հանդէսին վրայ, ու զայն պիտի շարունակենք կանոնաւոր կերպով եւ յարստեւութեամբ :

Առաջին շրջանի վերջին 11-12 թիւերը պիտի հրատարակուին քիչ ատենէն, ու «Համալսարան»ի Երկրորդ Շրջանը պիտի սկսի յառաջիկայ յուլիս 1էն :

«Հանաչարան» շատերու բաղձանքին գոհացում տալու համար իր սխանքիֆիք քննադատական մասը աւելի պիտի ընդարձակէ, ու օրուան հայ «Գիրքերու եւ Թերթերու» վերայ հակիրճ տեսութիւններ պիտի ընէ :

Հանաչարան, ինչպէս շատեր թիւրիմացութեամբ կարծեցին, զուտ ուսանողական հանդէս մը չէ ու իր սիսդոսը նպատակին հետ մասամբ միայն առընչութիւն ունի, որուն վրայ մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք :

Հանաչարան պիտի զբաղի ուսանողներով, բայց ոչ բոլորովին անոնց մասնաւոր զարգացումի սեփական նիւթերով, անոնց մեթոտ մը ցոյց տալու թեւադրիչը պիտի ըլլայ, բայց ոչ կրթիչը, բան մը որ զիւրհասկնալի է :

Հանաչարան, մեր լեզուագիտութեան օգտակար ըլլալու համար, երբեմն այդ կարգի յօդուածներ ալ պիտի հիւրընկալէ «պատմուածք»ի, «վիպակ»ի եւ ուրիշ ձեւերու տակ, որոնք բարձր ու վարձի վերին շահեկանութիւնն ալ իրենց պիտի միացնեն, (նմոյշը այս թիւերուն մէջ պիտի գտնէ ընթերցողը) :

Հանաչարան բացի իր գիտական հոռած յօդուածներէն, ուսումնասիրութիւններէն, քրօնիկներէն, նոր տեղեկատու բաժին մը պիտի բանայ, իր «Երկրորդ շրջան»էն՝ օտար գրական եւ գիտական նոր հրատարակութիւններու վրայ, օգտուելով Ֆրանս, կարեւոր հանդէսներէն եւ պարբերականներէն :

Հանաչարանի ծրագրին այս փոքր բարեփոխումներու պէտքը զգացուած է մեզի ուղղուած բազմաթիւ թղթակցութիւններու խնդրանքին վրայ, ու մենք անոր գոհացում կուտանք քանի որ մեր նպատակն է օգտակար եւ միայն օգտակար ըլլալ մեր հայրենակիցներուն :

«Հանաչարան»ի Երկրորդ Տարեշրջանի 12 թիւերու բաժանորդագրութիւնը փոխանակ 12 Ֆր. ի՛ 10 ՖրՍն է, ամեն երկրի համար :

ԽՄԲ.

Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի

Տ Պ Ա Ր Ա Ն

Փ Ա Ր Ի Չ

Կը տպագրուին հայերէն, ֆրանսերէն եւ ուրիշ օտար լեզուներով ամէն տեսակ աշխատութիւններ:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ.

Մանուցագիր, Շրջաբերական, Արէթոլոլթ, Փոխգիր, Առեւտրական զանազան տոմսեր, Տոմար, եւն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Գիրքեր, Գրքոյկներ, Կանոնագրութիւններ եւ Մրա-
գիրներ: Լրագիրներ եւ Հանդէսներ: Համալսարանական
Թեզեր, եւն:

ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԻ ՊԵՏԳԵՐ.

Այցաբարա, Նամակագրուի, Հարսնիքի եւ Մուռնդի
նամակներ, Հրաւիրագիր, Մահազդ, եւն:

Պատկերազարդ եւ գունաւոր աշխատութիւններու մէջ,
ճաշակ եւ նրբութիւն:

Մաքուր եւ խնայեալ Տպագրութիւն

Ի Ի Ս Տ Չ Ա Փ Ա Ի ՈՐ Գ Ի Ն ԵՐ

Օտար երկիրներէ եղած յանձնարարութիւնները կանխիկ են
եւ կը կատարուին փութով եւ նշուքեալք:

IMPRIMERIE HAMALSARAN

4, RUE ORTOLAN, 4
PARIS

Յունվար 7/20ին Փարիզի Հայ Մատուռին մէջ Հողե-
հանդիստ կատարուեցաւ մեր բարեկամին Պ. Յովհ. Շա-
ւարշի մահուան առթիւ:

« ՀԱՄԱԼՍԱՐԱՆ »Ի

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՑՈՒԱԾ Է

| | | | | |
|------------|-----------|----------|-------|------------|
| Ֆրանսա | (12 թիւ) | 10 ֆր. | 6 թիւ | 6 ֆր. |
| Օտար երկիր | « « | 10 « | « | 6 « |
| Թուրքիա | « « (ողջ) | 40 դրչ | « | 25 ողջ |
| Ռուսիա | « « | 4 ռուպլի | « | 2 ռ. 50 կ. |
| Ամերիկա | « « | 2 տոլար | « | 1 տ. 20 ս. |

«Համալսարան»ի Ա. Շրջանի 12 թիւերը կազմուած (կաշեկազմ) կը շրկուի ամեն անոնց, որոնք մինչեւ յուլիս մեզի պիտի շրկեն 13 ֆրանք :

Բաժանորդագրութիւն, նամակ կամ թղթակցութիւն ուղղել

M. Baghdassarian

Directeur de la Revue «Hamalsaran»

4, rue Ortolan — PARIS

« ՀԱՄԱԼՍԱՐԱՆ »Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ախալցխա . — Ա. րժ. Տէր Ն. Գէյ. Համբարձումեանց
 Ամերիկա (Թրոյ) . — Ա. Գ. Թորոսեան
 » (Լին) . — Կարապետ Ստեփանեան
 Դալիքեժ . — Տօք. Կ. Փաշահան
 Եգիպտոս (Աղեքաանդրիա) . — Միւրան Չրապեան
 Երզնկա . — Կ. Նարնջեան
 Թոբաթ . — Յ. Սիւլվէճեան
 Տրապիզոն . — Պ. Սիմաւոնեան